

Ա Ն Դ Ր Է Ս Ս Ե Ր Է Ց *)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱԿ

(1617)

ԺԳ.

Թէպէտ Ճահրուխ-բէկը գոհ չեղաւ արքայի դէպի
հայերն ունեցած ներողամտութիւնից, այսու ամհնայնիւ,
նա բաջալերուեցաւ այն դէպքից, որն առիթ տուաւ Ճա-
հին՝ երկրորդ անգամ հայերի դէմ զայրանալու, ըստ ո-
րում այդ նշանակում էր թէ կրակն արդէն պատրաստ
է. մնում էր միայն ֆէել վրան և հրդէն ինքնիրեն կը
բորբորի:

Այս պատճառով, ահա, օգտուելով Ճահի՛ «գերծած
պլուխների» գործը հետազօտելու մասին իրեն տուած ի-
րաւունքից, Ճահրուխ-բէկն սկսաւ մի կարի խիստ և բաղ-
մակողմանի քննութիւնն. նրա նպատակն ոչ այնքան գոր-
ծի պատճառները հետազոտելը և ճշգութիւնը երեան
հանելն էր, որքան հայոց վրայ նոր յանցանքներ բար-
դելը. եւ այդ նպատակին համնելու համար՝ նա գործ
դրեց ամեն հնարաւոր միջոց:

Երկու օրից յետ Ճահրուխը ներկայացաւ Ճահին և
հետևեալն ասաց.

— «Հայերի յանդգնութիւնը, Տէր, անցել է ամեն

*) Տե՛ս Լումայ Բ. ա. գիրք Բ.

շափ ու սահման։ Քո արևափայլ մեծութեան նրանք
հասցըլ են այնպիսի անարգանք, որի նմանը մինչև այ-
սօր չէ հասել իրանի ոչ մի գահակալին...»։

Թագաւորը կատաղեց։

—Կարճիր լեզուդ, թշուառական, ով է այն ապե-
րասանը, որ համարձակուի երազել՝ անարգանք հասցնել
ահաւոր Զահաբասին, գոչեց նա տեղից վեր թռչելով և
իւր մեծմեծ աշքերում վայրենի հուր ցոլացնելով։

—Աւաղ, ծէր իմ, կատարուած քննութիւնն ապա-
ցուցեց որ հայերը ոչ միայն կարողացել են երազել՝ այլ
և գործադրել։ Ներիր քո ծառային, որ գժբաղվութիւն
ունի այս օրինակ մի անախորժ լուր Քո մեծութեան
հաղորդելու, պատասխանեց Զահոռուխը կեղծ ակնածու-
թեամբ։

—Դու իրաւոնք չունիս ոչինչ թագցնելու. խօսիր,
ինչ որ զիտես, հրամայեց թագաւորը՝ հրացայտ աշքերը
պաշտօնեայի վրայ սեենելով։

—Ես պտտել եմ իրանի շատ գաւառները. գտնուել
եմ Զահնշահի հովանին վայելող ամենաեռաւոր երկիր-
ներում, և ամեն տեղ, տէր իմ, տեսել եմ ժողովրդին
քեզ սիրող ու անձնուէր. քո անուան երկրպագու։ Ըն-
դարձակածաւալ իրանի մէջ ես չեմ պատահել մի մար-
դու, որ երջանիկ չամարէր իրեն, եթէ վերցնէին նրա-
նից ոչ միայն իւր գոյքն ու հարստութիւնը այլ և բոլոր
զաւակները՝ Մեծափառ Զահին նուիրելու համար։ Ամեն
մի ուղղափառ սիրով կառնարհէր գլուխը այդ օրի-
նակ հրամանի առաջ՝ հաւատալով թէ զրանով պիտի ար-
ժանանայ Զահի գէթ մի ողորմած հայեացքին...»։

—Իսկնև համար է այդ նախաբանը, ընդհատեց
Զահն անհամբերութեամբ։

—Համեմատելու համար մեր ուղղափառներին այս
բրիստոնեայ հայերի հետ, որոնց դու իրաւամբ «թարս»

անուանեցիր: Երբէք չէի կարող կարծել, կամ նոյն խակ երկակայել թէ՝ այս ագուկեցի հայերը իրենց մանուկների զլուվները կգերծէին՝ արհեստական կերպով նրանց տգեղացնելու համար, որպէս զի Մեծափառ Շահը նրանցից ոչ ոքին գեղեցիկ չգտնելով, շտանէ իւր հետ Սպահան:

— Անկարելի է... ճշմարտութիւնը խօսիր, Շահուս, ապա թէ ոչ, այս բովէին մեխել կտամ զլուխդ դարբասի պատի վրայ, զոշեց թագաւորը այնպիսի սըրտմտութեամբ, որից ամեն որ կարող էր գողղալ: Բայց Շահուսը, որ լաւ էր ճանաշում իւր վեհապետին, խաղաղ ձայնով պատասխանեց:

— Ինչպէս կյանդգնեմ ստել քո ահաւոր մեծութեան առաջ, Տէր իմ:

— Թշուառականն, ես ինքս տեսայ որ այդ մանուկները վարակուած էին գոնջով. անշուշտ նրանց գլուխները գերծել են՝ գոնջը դարմանելու համար:

— Հենց զլմաւորն այն է՝ որ այդ գոնջն էլ կեղծ է:

— Ի՞նչպէս, դու չես զառանցում:

— Ոչ, Տէր իմ. ես ճշմարտութիւն եմ խօսում. հայ ծնողներն այդ գոնջը առաջացրել են մանուկների զլիների վրայ արհեստական եղանակով: Այդպէս է վկայում քո բժշկապետը:

— Ուզուրլութէկը.

— Այն, Տէր իմ.

— Կանչեցէք նրան այստեղ, հրամայեց Շահը շթիրներին:

Բժշկապետը ներս եկաւ և հաստատեց այն ամենը, ինչ որ հաղորդել էր Շահուսը. այլ և աւելացրեց թէ ինքն այդ գոնջի նմանող վէրքերը կարող է բուժել երկու օրուայ մէջ՝ ամենահասարակ օծանելիքով. մինչդեռ գոնջը, ինչպէս յայտնի է, հաղիւ է բուժւում մի քանի ամիսների եւ երբեմն, ամրող տարուայ ընթացքում:

Թագաւորը թէպէտ սաստիկ զայրացաւ, բայց չկամենալով իսկոյն և եթ պատժել յանցաւորներին, հրամայեց հետեւալն օրը կազմել բազմամարդ ատեան, բերել այդտեղ, նա և, մանուկների ծնողներին և իւր ներկայութեամբ հարցափորձել նրանց, Եւ որպէս զի յանցաւորները ժամանակ չունենային միմեանց հետ տեսնուելու և արդարացման պատճառներ յերիւրելու, Շահը պատուիրեց շայտնել ոչ ոքին թէ ինչն համար է ատեան հրաւիրում.

Եւ հետեւալ օրը մունետիկները հնչեցրին քաղաքում ձահի հրամանը, Խսկոյն աւագանին շտապեց ապարանքի սրահը, Եկան այդտեղ հայ ու պարսիկ մեծամեծները, մելքրները, բէյերը, խօջաները, դատաւորները. Հայոց առաջնորդը և քահանաները, ունիթոռների կարգապետն ու պապի նուիրակը և վերջապէս Տէր Անդրէասի վախտուն աշակերտների ծնողները, որոնք գուշակելով թէ ինչի համար են հրաւիրուած, մտնում էին սրահը իբրև մահապարտներ: Նրանց դէմքերի վրայ նկարուած էր երկիւզ և սարսափ:

Երբ ատեանը բոլորեց, ներս մտաւ ձահարասը, հագած հանդիմաւոր զգեստ և շրջապատուած գրանիկներով ու շաթիրներով:

Նստելով գոհարազարդ դահի վրայ, նա հրամայեց դպրապետին կարդալ մեղազրականը.

Եւ վերջինս կարդաց:

Ապա ձահը հրամայեց խօջայ Նազարին բացատրել մեղազրականի բովանդակութիւնը այն հայերին, որոնք անծանօթ էին պարսկական լեզուին:

Այդ հրամանը նոյնպէս կատարուեցաւ: Ապա թագաւորը դառնալով հայոց առաջնորդին՝ բարձր ու ցասկոտ ձայնով հարցրեց.

— Ճշմարիտը խոստովանիր, մահրասայ, քն գիտու-

թեսումքն է կատարուել այս յանցանքը թէ՞ ոչ:

— Աստուած մի արացէ, Տէր, ինչպէս կհամար-ձակուէի թերանալ իմ պարտաւորութեան մէջ, որ է երկր-պագել իմ թագաւորին ուղիղ սրտով և ծառայել նրան հաւատարմութեամբ, պատասխանեց վարդապետը խո-նարհելով մինչև գետին:

— Ո՞վ է ուրեմն առաջին անդամ այս դժոխային կատակը մտածել, թող առաջ գայ և խոստովանէ, գո-չեց թագաւորը նորէն և իւր հրացայտ հայեացը սկե-ռեց ծնողների վրայ, որոնց գէմքերը այլազոնել էին արդէն ահից:

Եւ սակայն ոչ որ շշարժուեց տեղից և ոչ իսկ ձայն հանել համարձակուեցաւ:

— Առաջ արի և խոստովանիր. Երբ և ինչպէս գեր-ծեցիր բո որդու գլուխը, կամ ով խորհուրդ տուաւ քեզ այդ, դարձաւ Զահը ծնողներից մինին:

Վերջնս մօտեցաւ դողղացող ծնկներով և ասաց աւելի ևս դողղացող ձայնով.

— Ես ոչինչ չգիտեմ... իմ որդու գլուխը տեսել եմ գերծած և չգիտեմ թէ ով է արել...

— Թշուառական. եթէ քո որդուոյ գլուխը գերծելու փոխարէն կտրէին, միթէ չի պիտի իմանայիր թէ ով է արել:

Մարդը լուռ էր:

Թագաւորը դարձաւ երկրորդին, երրորդին, չորրոր-դին, բայց ամենքն, համարեա, նոյն պատասխանը տուին. ոչ որ նրանցից չկամեցաւ խոստովանել իւր մասնակցութիւնը այդ գործի մէջ. Առն ու սարսափը այնպէս էր տիրել խեղճերին որ նոյն իսկ խօսածները չէին հասկանում. «չգիտեմ», «չեմ արել», «տեղեկութիւն չունիմ» այս էր նրանց միակ պատասխանը:

Թագաւորի կատաղութիւնը հասաւ իւր գագաթին:

Նա գոռում, գոշում էր և երդում իւր գլխով որ բոլորին միասին գլխատել կտայ իսկոյն, եթէ չեն խոստպանիլ իրենց յանցանքը։ Բայց ոչ ոքի բերանից խոստպանութեան խօսք շտուեցաւ։

Այն ժամանակ թագաւորը հրամայեց ատեան բերել բոլոր վաթսուն տղաներին և նրանց բերանից իմանալ ճշմարտութիւնը։

Սոսկումը կալաւ ծնողներին. Էլ ազատութեան յօյս չէր մնում. տղաները միամտաբար պիտի մատնէին նըրանց. այդ մասին ընաւ չէին մտածել և ոչ իսկ կանխաւ մի բան հոգացել. Ի՞նչ անէին ուրեմն։ Նրանք շուարած նայեցին իրար վրայ և ապա դէպի երկինք։ Այդտեղից էին այժմ օգնութիւն սպասում։

—Ես պիտի գլխատեմ ոչ միայն ձեզ, այլ և ձեր զաւակներին, ձեր իսկ աշքերի առաջ, որպէս զի աշխարհն իմանայ թէ՛ ի՞նչ պատիժ են կրում խարեբաները, դոչեց նորէն ձահարասը և նրա որոտացող ձայնը զարհուրեցրեց ամենքին։

Բայց հազիւ բռնաւորն իւր վերջին խօսքն արտասանեց և ահա սրահի խորքից լսուեցաւ մի անակնկալ ձայն։

—Մեծափառ Արքայ. Թոյլ տուր բո խոնարհ ծառային՝ յայտնել Ատեանի առաջ այն յանցաւորի անունը, որի պատճառով սպառնում ես դու կոտորել այս անմեղներին։

—Ո՞վ է խօսողը, թող առաջ գայ. հրամայեց թագաւորը։

Քահանաների խմբից ելնելով սկսաւ դէպի ատեանն առաջանալ Անդրէաս երէցը։

Բոլորի վրայ տիրեց ահ և զարմացում. Ի՞նչ պիտի յայտնէր արդեօք նա ատենի առաջ. որին պիտի մատնէր. ինչ տեղեկութիւններ պիտի տար. Գործուած լուսն Ա.

յանցանքի մէջ, այս, նա ինքը մաս չունէր. ուրեմն և կարսող էր անուանել յանցաւորներին... բայց միթէ Տէր-Անդրէասը կզործէր այդպիսի ոճիր. միթէ նա ժողովրդին կդաւաճանէր... անկարելի էր. ոչ ոք չէր հաւատում. մանաւանդ նրանք, որոնք ճանաչում էին երէցին: Բայց միևնոյն ժամանակ ամենքը վախճանում էին նրա ճշմարտախօսութիւնից: Խսկ ինչ վերաբերում է առաջնորդին, նա ահից ու սարսափից արդէն սառել էր: 2է որ վերջին օրերում նա անպատճել էր այդ քահանային և նախատել նրան ժողովի առաջ: Ահա, ուրեմն, հասել էր ժամանակը որ Տէր Անդրէասը վրէժինդիր լինէր առաջնորդին: Եւ որա համար նա ունէր զօրաւոր միջոց. պլուխներ գերծելու խորհուրդը առաջին անգամ յղացուել էր առաջնորդարանում, իսկ այդ բանը յայտնի էր երիտասարդ երէցին....:

Այսպէս էր մտածում առաջնորդը և սոսկալով նայում Տէր Անդրէասի վրայ, որ հաղաղ քայլերով առաջնում էր դէպի ատեանը:

Բայց քահանայի դէմքի վրայ չէր նշմարւում մատնշի մաղձ և նախանձ, ոչ էլ աշքերում չարութեան կրակ: Նրա դէմքն, ընդհակառակը, վեհ էր այդ վայրկեանին և յոյժ պատկառելի. հայեացը վճիտ և հրեշտակային. կեցուածքը սէզ և գեղեցիկ: Երբ նա կանդ առաւ ատենի առաջ, թագաւորն ակամայից յառեց աշքերը նրա վրայ և սկսաւ դիտել երէցի աննման գեղեցկութիւնը, որ մի առանձին շուր ու վեհութիւն էր տալիս նրա քահանայական տիսուր սքեմին:

— Ո՞վ ես գու և ինչ գիտես այստեղ քննուող գործի մասին. խօսիր ճշմարտութեամբ և դու կարծանանաս իմ բարեհաճ ուշադրութեան, դարձաւ շահը երէցին.

— Ես, Տէր արքայ, վարժապետ ու դաստիարակ եմ այն վաթսուն աշակերտների, որոց գերծած գլուխները

այս ատենի քննութեան առարկան են դարձել, պատասխանեց երէցը խաղաղ ձայնով։

—Դու նրանց վարժապետն ես, հարցրեց շահը հետաքրքրութեամբ։

—Այն տէր։

—Բարի, ուրեմն ամենից առաջ քեզ պէտք էր հարցնել։ Ասա այժմ ինձ. ովքեր են գերծել քո աշակերտների գլուխները, և նվէ հնարել արհեստական գննջը։ Մնջուշտ դու ամենից աւելի տեղեակ ես այդ բանին։

—Թէ գլուխներ գերծելու և թէ արհեստական գոնզ առաջացնելու հեղինակը մէկն է, տէր, խօսեց քահանան։

—Այստեղ է այդ յանդուգն հոգին. գոչեց թագաւորը բարկութեամբ։

—Այն տէր. նա կանդնած է Քո առաջ։

—Տուր շուտով նրա անունը, հրամայեց թագաւորը։

—Ես ինքս եմ, տէր արքայ։

—Դու...։

—Այն, տէր։

Թագաւորն աշքերը սեսուեց քահանայի վրայ և ըսկսաւ դիտել նրան քննական հայեացըով։ Նրան թւում էր թէ երէցը խելագարին մէկն է, որ մի ամբողջ ժողովրդի գործած յանցանքը առնսւմ է իւր վրայ։ Մնացին ապշած նոյնպէս ատենականները, պարափել իշխանները և, նամանաւանդ, ունիթոռ կարգապետները։ Վերջիններս ըոպէ առ րոպէ սպասում էին շահն՝ յանցաւորները կոտորելու մասին տրուելիք հրամանին, որպէսզի իրենք, յանուն չուովմայ գահին միջամտելով՝ արգիլեն կօտորածը, իսկ դրա փոխարէն իրենց կողմը դարձնեն մի քանի հարիւր հայ ընտանիք։ Եւ սակայն տէր Մնդրէասի խոստովանութիւնը ոչնչացնում էր նրանց յոյոը։

Զարմացողների թուին պատկանում էին նաև, տէր Մնդրէասի հակառակորդները և նրանց հետ միասին ինքն

առաջնորդը, որ մինչ այդ այնքան աննպաստ կարծիք ունէր երիտասարդ երէցի մասին, որին և այդ պատճառով վշտացրել էր յանիրաւի:

Եղարմացան միայն հայ ծնողները և երէցին կուսակից քահանաները, որոնք քաջապէս ճանաշում էին նրան և գիտէին թէ՝ որպիսի գեղեցիկ համարձակութեան տէր և ի՞նչ անօրինակ անձնուիրութեան ընդունակ պաշտօնեայ է նա: Երբ վերջինս յանցանքն առաւ իւր վրայ, ամենքի համար պարզուեցաւ այն միտքը թէ՝ հայրենասէր երէցը իւր անձը զո՞ն է բերում ժողովրդին, աւելի լաւ համարելով որ ինքը զո՞նուի միայնակ, քան շատերը միասին: Եյդ պատճառսվ նրա վրայ բարեկամներն սկսան նայիլ սրտայոյզ արգահատութեամբ, իսկ հակառակորդները՝ ամօթով և խղճահարութեամբ:

—Ուրեմն զմու ես գերծել տղաների գլուխները, հարցրեց շահը առժամանակեայ լուսթիւնից յետ:

—Եյն, տէր. պատասխանեց քահանան:

—Իսկ գո՞նջը ով առաջացրեց:

—Են էլ ես արի, իմ պատրաստած գեղով:

—Նպատակիդ ի՞նչ էր, բացատրիր տեսնեմ, հարցրեց շահը առանց բարկանալու, որովհետեւ քահանայի խոստովանութիւնը իջեցրել էր արդէն նրա զայրոյթը:

—Որպէս զի իմ նպատակը բացատրեմ, շահը պիտի հաճի լսել ինձ համբերութեամբ:

—Խօսիր, ես կլսեմ քեզ, ասաց վերջինս մեղմով և միննոյն ժամանակ հետաքրքրութելով թէ՝ ի՞նչ պիտի ասէ քահանան:

—Մեր օրէնքը, տէր արջայ, հրամայում է մեղ՝ Աստծոնք տալ Աստծուն և թագաւորինը՝ թագաւորին...:

—Եյդ լաւ օրէնք է, ընդհատեց շահը:

—Եյդ միննոյն օրէնքը շարունակեց երէցը, ամբարիշտ է համարում նրան, ով արդիլում է մեղ առ Աս-

տուած ունեցած մեր պարտքը կատարել։ Եւ այդ իսկ պատճառով հրամայում է մեղ՝ դիմադրել ամբարիշտների ձգտումներին՝ թագաւորներ լինին նրանք թէ հասարակ մարդիկ։

— Ճանաչնամ ես արդեօք այդպիսի մի մարդու, որ արգիլում է ձեզ տալ Աստծոնք Աստծոնն։ Հարցրեց շահը անհամբերութեամբ։

— Այս, տէր։

— Արտասանիր անունը, ես գլխատել կտամ նրան։

— Նա կոշւում է իրանի մեծ գահակալ, Խուավէնդի որդի՝ հզօր Շահարաս։

— Դահճապետ, խլիր այդ թշուառականի լեզուն, գոչեց թագաւորը այնպիսի մի ձայնով, որից սրանը գողղաց։

Սուաերամերկ դահիճը մօտ վագեց իսկոյն. սարսափը պատեց բոլորին, բայց երէցն անվրդով էր։

— Դու չես զարհուրում, յանդուզն արարած, գոչեց թագաւորը զայրագին։

— Երկու անյաղթելի ոյժեր կան աշխարհում տէր. մինը պատկանում է նրան՝ որ որոշել է մեռնել. միտք նրան՝ որ խօսում է ճշմարտութիւնը. Այդ երկուսն էլ այժմ գտնում են իմ մէջ...։

— Իսկ երրորդը մոռացար, նա գտնում է ահա դահճապետի ձեռքում, որ պիտի լռեցնէ քեզ, ընդհատեց թագաւորը։

— Ոչ, տէր իմ, երրորդ անյաղթելի ոյժը գտնում է այն թագաւորի սրտում, որ իրեն անհաճոյ եղող ճըշմարտութիւնը կարողանում է համբերութեամբ լսել, յարեց երէցը մեղմօրէն։

— Այս մարդը, Խան, կարի յանդուզն է, բայց զուրկ չէ խելքից. լսենք նրան մինչև վերջը, դարձաւ շահը Ամիրգիւնէրն։

—Մեծափառ շահի ցանկութիւնը վեր է մեր բոլորի իմաստութիւնից, պատասխանեց խանը.

—Ես քեզ սպանել կտայի իսկոյն, եթէ այդ ինձ համար մի խօսքից աւելի արժենար, դարձաւ շահը երէցին. ապրիր ուրեմն և ասելիքդ շարունակիր: Ես արդէն խոստացել եմ և կսեմ քեզ համբերութեամբ:

Հահաբասի մէջ այդ վայրկենին խօսում էր ոչ թէ արքայական մեծանձնութիւնը, այլ մի կասկածոտ հետաքրքրութիւն: Նրան թուում էր թէ՝ ժողովուրդն ունի որոշ գաղտնիքներ կամ դիտաւորութիւններ, որոնք կապ ունին, անշուշտ, մեծ յանցանքների կամ, գուցէ, դաւադրութեանց հետ, որոց մասին, սակայն, ինքը տեղեկութիւն չունի: Այդ պատճառաւ նա յանցաւորին չէր զրկում կեանքից, որպէսզի ինքն ևս զուրկ չմնայ երեակայած գաղտնիքների ծանօթութիւնից:

Այն գահակալը, որ յաճախ ծպտեալ մտնում էր հպատակների տանը, ընկերանում էր անցորդներին կամ ուղեկցում գիւղացւոց՝ որպէսզի նրանց հետ խօսակցելով՝ կարողանայ հասու լինել իրենից ծածկուող ճշմարտութեանց, և կամ ստուգէ թէ՝ ժողովուրդն ինչ չափով սէր կամ ատելութիւն է տածում դէպի իրեն, ընական է որ այժմ ձեռքից չժողովնէր տէր Անդրէասին, յուսալով թէ՝ նրա խոստովանութիւնը գաղտնիքների մեծ աշխարհ պիտի բանայ իւր առաջ:

Եւ երիտասարդ երէցը անվրդով սկսաւ իւր խօսքը շարունակել:

—Ասացի որ մեր օրէնքը ուատւցանում է մեզ՝ դիմագրել նրանց, որոնք արգիլում են մեզ՝ դէպի Աստուած ունեցած մեր պարտքը կատարել...:

—Եւ թէ ես ինքս եմ, որ այդպիսի արգելք եմ դնում ձեր առաջ, ընդհատեց շահը:

—Այն, տէր:

—Թուիր, ուրեմն, այդ արգելքները:

—Այն մանկաժողովը, տէր, որ քո հրամանով պիտի կատարուի այս քաղաքում, մինն է այդ արգելքներից:

—Մանկաժողովը: Միթէ նա արգիլում է ձեզ՝ առ Աստուած ունեցած ձեր պարտքը կատարել:

—Նա արգելում է շատ ծնողների՝ հայրենի հաւատով մեծացնել իրենց որդիներին: Խոկ ամեն մի այդպիսի արգելքին մինք դիմադրում ենք, որովհետեւ...

—Ոճիր էք գործում թշուառականեր, ընդհատեց թագաւորը. միթէ շգփատէք որ երկրի ամենալաւ ծաղիկները նախ թագաւորի արքունիքը պիտի զարդարեն:

—Այն, այն ծաղիկները, որոց թուփերը չեն արտասում՝ երբ զրկում ես նրանց իրենց զարդերից: Բայց այն ծաղիկները, որոնց «մանկաժողովն» է փնջում, լաց ու կոծով լցնում են այն պարտէզները, որոց մէջ նրանք ծնուել ու մնունդ են առել:

—Ո՞ր ծնողն է դժգո՞ն մնում այն բանից, որ իւր որդին անհնշան անկիւնից ենելով ապրում է արքունիքում և ամեն օր արրայի երեսը տեսնելու և խօսքը լըսելու բաղդին արժանանում:

—Ըստհանրապէս բոլոր հայ ծնողները:

Թագաւորը մի անհանգիստ շարժում արաւ և դէմքը խոժողոց: Բայց նորէն զսպելով իրեն՝ հարցըց:

—Ի՞նչ է պատճառը:

—Այն, որ նրանց որդիքը քո արքունիքը մտնելուց յետ՝ դադարում են այլ ևս քրիստոնեայ լինելուց. կարչում են հոգուով և մարմնով: Խոկ հայ ծնողի համար՝ տեղի լաւ է հայ թաղել իւր որդուն, քան տեսնել նրան կեանքի մէջ փառաւորեալ և սակայն՝ մահմեղական:

—Ո՞վ տէր, հրամայիր ինձ ելնել այս ատենից, զի ականջներս չեն հանդուրժում լսել այս օրինակ հայ հոյանքներ մի պիղծ քրիստոնէի բերանից, բացագանչեց

պարսիկ կրօնապետը՝ տեղից վեր թռչելով։
— Նրանք, որոնք չեն կամենում համբերութիւն սո-
վորել իրենց թագաւորից, պիտի զնան ախոռը՝ չորքո-
տանիներից այդ բանը սովորելու, գոռաց շահը միջա-
մտող կրօնապետի վրայ և վերջինս այլագունելով՝ իւր
տեղը կծկուեցաւ։ Ապա շահը դառնալով քահանային, նոյն
ցասկոտ ձայնով հրամայեց։

— Ճարունակիր, քաշի, ես կամենում եմ տեսնել
թէ՛ հայը նր աստիճան կարող է լրբանալ՝ եթէ նրա գըլ-
խից զսպող սանձը հանուի։

— Ես կշարունակեմ, Տէր, հզօր շահնշահին ցոյց
տալու համար թէ՛ արժանաւոր քրիստոնեան նր աստի-
ճան աներկիւղ կարող է ճշմարտութիւնը խօսել, երբ
հարկը պահանջէ, պատասխանեց քահանան և ապա յա-
րեց։ — Որովհետև, աէր իմ, ես արդէն գիտէի թէ կա-
տարուելիք «մանկաժողովը» մեծ վիշտ պիտի պատ-
ճառէ իմ ազգակիցներին, ուստի մտածեցի, կա-
րեաց չափով, մեղմել հարուածի ծանրութիւնը, այսինքն՝
ազատել այդ պատուհասից գէթ իմ աշակերտներին, ո-
րոց վրայ ես մեծ աշխատանք ունէի. որոց հետ միաօրին
տարիներ էի անցուցել՝ ուսուցանելով նրանց ճշմարտու-
թեան և առաքինութեան ճանապարհները... Բայց ինչ
կարող էի անել այդ դէպրում։ Արքայի հրամանին ան-
սաստել անհնար էր. մնում էր ուրեմն խորամանկել։
Այդ, արդարև, մի յանցանք էր. քրիստոնէական օրէնքը
արգիլում է ձեզ դմանօրինակ գործ։ Բայց որովհետև այդ
օրէնքից առաջ նախախնամութիւնը դրել է մեր սրտում
և մի ուրիշ մեծ օրէնք, որ կոչւում է եղքայրսիրութիւն,
ուստի ես հնազանդուեցի այդ անդրանիկ օրէնքին. ես
խորամանկեցի, այն, բայց խորամանկեցի նրա համար,
որովհետև յայտնապէս դիմադրել չէի կարող. Եւ գիտցիր,
ով արքայ, որ չկայ աշխարհում աւելի մեծ պատուհաս-

քան հնազանդիլը բռնաւորին, որ ստիպում է մարդկանց ստել, կեղծել և խորամանկել՝ բռնութեան զրկանքներից աղատուելու համար.... Խոստովանում եմ յանցանքս. Ես ինքս գերծեցի աշակերտների գլուխները. վարակեցի նըրանց արհեստական գոնզով միայն և եթ լինելիք «մանկաժողով»-ից նրանց ազատելու համար. Եւ միթէ յանցաւոր էի, կամ յանցաւոր կլինէին նրանք, որոնք կհետևէին իմ օրինակին. Երբ որսորդի բարակը հալածում է էրէին, սա փախչում, թագնում է անտառի խորքերում, կամ թռչում է ահաւոր անդունդների վրայից և այրերն ու խորշերը ապաւէն առնում իրեն... Միթէ յանցաւոր է թշուառ կենդանին, որ խոյս է տալիս բռնութեան երեսից, որ ճգնում է իւր կեանքն ու ազատութիւնն ապահովել....

— Յանցաւոր է, քաշիշ, որովհետև նա ծնուել է մարդ արարածին կերակուր լինելու համար, ընդհատեց շահը զայրագին:

— Յանցաւոր է, որովհետև թոյլ է և տկար....

— Կամ այդպէս ընդունիր. իսկ թոյլերը միշտ կուր պիտի լինին զօրեղին. այդպէս է սահմանել ինքը նախախնամութիւնը. Միթէ չգիտես որ առիւծը պատառում է գիշախանձ բորենուն, իսկ վերջինս ցրում է գայլերի վոհմակները. Եթէ ոչխարն էլ ժանիք ունենար, անշուշտ իւր հերթում կհալածէր եղջերուին. Բայց այդպիսի գէներից զուրկ լինելուն համար՝ ինքն է գայլերին կերակուր դառնում:

— Եւ հէնց այդ պատճառով մենք խոնարհում ենք նախախնամութեան սուրբ կամքի առաջ.

— Բայց նոր է այդ խոնարհութիւնը, հարցրեց շահը զայրագին:

— Այդ գու տեմում ես ակներկն. Մենք ծառայում ենք քեզ հաւատարմութեամբ և նոյնը ուսուցանում մեր

որդւոց. մենք կատարում ենք դէպի քո մեծ իշխանութիւնն ունեցած մեր օրինական պարտաւորութիւնները. զոհում ենք քո զահին մեր մարմնական ու ստացական բարիքները և այդ բոլորի փոխարէն՝ ժտում ենք միայն պահպանել մի բան—մեր հոգեկան բարիքը, այն է հայրենի կրօնը պաշտելու, հայրենի լեզուով աղօթելու մեր միակ երաւունքը...

— Ո՞վ է արգիլում ձեզ այդ, աղօթեցէք, ողբան կարող էք:

— Մենք աղօթում ենք. մեզ ոչ չէ արգիլում, բայց զրկանքը հասնում է մանուկիներին. «մանկաժողովի» ցանցում բռնուողները զրկում են հայրենական լեզուից և հաւատից:

— Ծնողներին չեն արգիլում. գոհ եղէք դրանով. ինչ էք մանուկների մասին մտածում:

— Օ՛, տէք իմ, երանի թէ միայն ծնողներին արգիլէիք... ինչ հոգ երք կացինը տապալում է այգու չորացող ծառերը. Բայց այդին, անաղ, աւերակ է դառնում, երք նրա միջից հանում են ծաղկածին ծառերը, մատղաշ տունկերը... և այդ դէպօւմ մի զայրանար երք խեղճ այգեպանը կուում է աւերող ձեռքի կամ ոյժի դէմ...:

— Ես ուրեմն աւերող ձեռքն եմ, իսկ դու այգեպանը, որ կուում ես իմ դէմ... թշուառական, միթէ մոռվերն էլ պիտի երազեն թէ կարող են կոււել առխւծի դէմ...: Երք Շահաբասը ցանկանում է որ ձեր որդիքը հայ շման, միթէ դուք կարողէք դիմադրել այդ ցանկութեանն. Ինչու գոհ չէք լինում որ չեմ փակում ձեր եկեղեցիները և չեմ մահմետականացնում ձեզ ամենրիդ. կայ միթէ աշխարհում մի ոյժ, որ համարձակուի իմ արայական հրամանին դիմադրել...

Եյս խօսքերն արտասանուեցան այնպիսի մի եղա-

նակով, որ ներկայ եղող քրիստոնեաները սարսափեցան։ Նրանց թւում էր թէ ահա, ուր որ է, թագաւորը կը հրամայէ եկեղեցիները փակել և իրենց ամենքին բռնի մահմեղականացնել...։ 2Է որ իրանի գահակաները կատարել էին նմանօրինակ բռնութիւններ, իսկ ձահաբասը ահաւորագոյնն էր նրանց մէջ։

Բայց թագաւորի զայրոյթը երիտասարդ բահանայի դէմ էր։ Մի վայրկեան լոելուց և իւր բարկացայտ հայեցը ատենի վրայ շրջեցնելուց յետ՝ նա նորէն դարձաւ երէցին։

—Դու պիտի գիտենաս, ով սինլըոր, որ չնշին մի որդը իւր նմանների աղատարարը լինել չէ կարող։ Նա միայն չարիք կրերէ իւր գլխին՝ եթէ համարձակուի որդն լինելուց զատ մի ուրիշ քան լինել...։ Դու ցանկանում էիր քրիստոնեայ պահել քո աշակերտներին։ Իսկ ես այժմ հրամայում եմ որ ինքդ թողնես քրիստոնէութիւնը և դաւանես այն հաւատը, որը քո թագաւորը և հզօր իշանի գահակալն է դաւանում։ Քո ամենափոքր ընդդիմութիւնը կարող է կենազուրկ անել քեզ։

Տէր Ըսդրէասը չպատասխանեց և միայն արհամարհական մի ժայիտ խաղացրեց շրթունքների վրայ։

—Այդ բանի համար քեզ տալիս եմ միայն մի օր ժամանակ, յարեց թագաւորը։

—Իմ պատասխանը, Տէր արրայ, կարող ես լսել այս վայրկենին։

—Ասա։

—Ես կարող եմ մեռնել, բայց քո հաւատը դաւանել՝ երբէք։

—Քեզ հրամայում է ձահաբասը, գոռաց թագաւորը։

—Եթէ ինձ հրամայէին տասը ձահաբասներ միասին՝ դարձեալ չէի սասանիլ իմ հաւատից, պատասխանեց երէցը համարձակօրէն։

—Դու յանդգնում ես մինչև այդտեղ... որոտաց ձահը. դահճապետ. քարշիր այս թշուառականին դէպի մահապարտների բանտը. շղթայիր ոտները ամենածանր շղթաներով. պրկիր ձեռները գելարանի մէջ, իսկ պարանոցը անցցրու ծանր օղակիներ, որոնք շարունակ դէպի գետին խոնարհեն սրա յիմար և հապարտ գլուխը. Թողնա տանջուի այդտեղ ամենածանր տանջանքներով և ապա պատրաստուի անարդարոյն մահուան համար:

Եյս ասելով ձահը բարձրացաւ տեղից դայրագին և հետևորդների հետ միասին հեռացաւ դէպի իւր հանդըստարանը.

Իսկ դահճապետը մօտենալով բռնեց Տէր Անդրէասի թէկից և կոպտաբար քարշելով՝ դուրս հանեց նրան դահճից:

ԺԴ.

Տէր Անդրէասի կալանաւորութեան լուրը կայծակի արագութեամբ տարածուեց աւանի մէջ և ամենքին էլ, մեծ թէ փոքր, համակեց տիրութեամբ: Երբ մանաւանդ յայտնի եղաւ այն՝ թէ երիտասարդ երէցը ձահի ցասումը ժողովրդի վրայից հեռացնելու նպատակաւ է մատնել իրեն, էլ չկար մի հայ որ խոր սրտից չվշտանար նրա համար: Գրեթէ այն վայրկեանից որ երէցին բանտը տարին, նա ժողովրդի համար դարձաւ պաշտելի սուրբ: Տղամարդիկ ու կանայք, ծերեր և երիտասարդներ գոնդագունդ դիմում էին դէպի զնդանը՝ անձնուէր հովուին տեսնելու համար: Այդտեղ եկան, նաև, հայոց մեծամեծները — մելիքներ և իշխաններ՝ կալանաւոր երէցին միմիթարելու կամ նրան քաջալերական խօսքեր ասելու: Բայց քահճանային շտապել, փակել էին ամենա-

խով գետնափորներից մինում և զտհոռվսի հրամանով թոյլ չէին տալիս ոչ որի տեսնուիլ նրա հետ։ Նոյն իսկ Տէր Մնդրէտասի ծնողներն, որոնք իրենց որդու գլխին հասած դժբաղդութիւնը լսելով լաց ու կոծով և մազերնին փետական էին վազել՝ չկարողացան սիրելույ գէթ երեսը տեսնել։ Պահապանները նրանց ևս միւսների նման հեռացրին զնդանի դռներից։

Եւ սակայն այս ամենը չէր արգելում Ագուեաց ժողովրդին շարունակ գալ և խոնուիլ բանտի շուրջը, կանգնել այդտեղ ժամերով և սիրեցեալ նովուի վիճակն աւաղել։ Թէպէտ այդպիսով երէցի դրութիւնը չէր թեթևանում, այսու ամենայնիւ, ամեն մի հայ իւր հպարտքն էր համարում այցելել այն տեղին, ուր բանտարկուած էր քահանան և լսել նրա մասին մի որ և է նորութիւն։ Այդպիսի նորութիւններ, ի հարկէ, չկային, որովհետեւ դեռ ոչ չէր յաջողել տեսնել բանտարկեալին, կամ տեղեկութիւն առնել նրա դրութեան մտախն։ Սակայն ամեն մի այցելու դո՞ն էր լինում և այն լուրերով, որոնք հետզհետէ ստեղծուամ էին ամբոխի մէջ և տարածուամ իրեւ ճշմարտութիւն։

Երբ երէցի կալանաւորութեան առթիւ տիրող երկիւղը մի փոքր թուլացաւ, հայոց մեծամեծները մտածեցին դիմել շահի գլուխեան և ներումն հայցել բանտարկեալի համար։ Սա թէպէտ յանդուգն մի հայցուած էր և խնդրարկուները դրանով կարող էին իրենց վտանգի ենթարկել, այսուամենայնիւ, արժանաւոր հովուին նեղութիւնից ազատելու ցանկութիւնը այնքան էր մեծ, որ նրանք այդ որոշումը կայացրին։ Նոյն իսկ այս անգամ գործի զլուս անցաւ ինքն առաջնորդը, որի մէջ Տէր-Մնդրէտասի անձնուիրութիւնը զարթուցել էր նախանձաւորութեան գեղեցիկ զգացում։ Այն մարդը, որ սովոր էր հանգստութեան, որին մինչև այդ հետաքրքրել

էին միայն անձնական հաշվուները, պաշտօնի շահը և իշխանական իրաւունքը, այժմ կերպարանափախուել, նոր մարդ էր դարձել: Նա աներկիւղ ձեռնարկում էր վտանգաւոր գործի, որպիսին էր զայրացած Շահարասին միջնորդելը. և այդ անում էր՝ բռնաւորի երեսը մի անգամ տեսնելուց, նրա ահաւոր ձայնը սարսափով լսելուց յիտ: Մսձնուիրութեան լաւագոյն մի օրինակը դարձել էր վարակիչ. եւ առաջնորդը չէր քաշւում սովորել առաջնորդեալից հոգեւոր պաշտօնին արժանապէս ծառայելու դըժուարին արհեստը:

— «Քաջ հովիւը կատարեց իւր պարտքը՝ հօտն ազատելու համար. այժմ էլ հօտի վրայ է պարտք մնում հոգալ իւր հովուի ազատութեան համար...», ասում էր նա հայոց մեծամեծներին, որոնց ժողովել էր իւր մօտ՝ մտադրեալ միջնորդութեան մասին խորհրդակցելու:

Ժողովականներն առաջնորդի խօսքերը լսում էին սիրով և պատրաստակամութիւն յայտնում շնորհել ոչինչ՝ տարապարտ զոհին աղատելու համար: Եւ այդ իսկ նպատակով հարուստը բերում էր դրամական նուէրներ շահի մերձաւորներին գրաւելու համար, իսկ արքայի առաջ յարգ ունեցողը՝ խոստանում էր իւր բարոյական ազակցութիւնը:

Մինչդեռ հայերը այս պատրաստութեան մէջ էին, Շահուում բէկն աշխատում էր ուրիշ գործի համար: Նա մօտեցաւ թագաւորին և իրաւունք խնդրեց նրանից ըստիպել բանտարկեալին կատարել արքայի հրամանը, այն է ընդունել փութով մահմեղականութիւն, կամ ենթարկուիլ տանջանքների. «Կակառակ դէպքում, ասում էր բէկը, երէցի անհազանդութիւնը իբր օրինակ կծառայէ տեղացի բրիստոննեաներին և ըմբոստութիւնը հետզհետէ անելով նրանց մէջ՝ մեծ հոգսեր կպատճառէ արքայից արքային»:

Ճահը բանաւոր գտաւ սենեկապետի խորհուրդը և հրաման տուաւ նրան վարուիլ բանտարկեալի հետ լստ իւր ցանկութեան։

Ճահուլիսն, առանց ժամանակ կորցնելու, շտապեց դէպի զնդանը։

Կամենալով հասու լինել թէ՛ ողբան ճշդութեամբ են կատարել իւր հրամանը, նա անձամբ իջաւ այն գետնափորը, ուր փակուած էր քահանան։

Խուլ ու խաւարչտին մի նկուլ էր այն, բորբոսնած պատերով ու խորշերով. յատակը թաց. օդը՝ տոգորուած դարշահոտութեամբ. Մի նուազ լոյս, որ թափանցում էր այդ գուրը պատուհանի տեղ ծառայող խողովակի միջով՝ հազիւ նշմարելի էր կացուցանում թշուառ ընակարանի թշուառագոյն բնակչին. նա ընկած էր գետնի վրայ՝ ինչպէս անշնչացած մի դիակ. ոտքերը կապուած շղթաներով. ձեռքերը պրկուած կոճի մէջ, իսկ պարանոցը անցցրած երկաթեայ օղակ, որի ժանգոտած շղթայի ծայրը ամրացած էր բորբոսնած պատի մէջ. Այս դրութեամբ կապեալը չէր կարողանում ոչ նստել, ոչ կանգնել և ոչ իսկ պառկել ցանկացած ուղղութեամբ. զի անարի կոճի արգիլում էր նրա ամեն մի շարժումն, իսկ ծանր օղակը պարանոցը ճնշելով թոյլ չէր տալիս դէթ գլուխը բարձրացնել. Խեղճն ստիպուած էր կծկուել շարունակ մի կողի վրայ. դարշահոտ ցեխի մէջ... և անկարող օգտուելու այն մի կտոր ճաթից (կորեկահաց) ու դաւաթ չփից, որ դրել էին նրա առաջ իբրև կերակուր.

Եւ ահա բորբոսնած խորշերի կողմը լսուեցաւ ոտնատրոփ. փականը շարժեցին և ժանկահար դուռը բացուեցաւ. Երէցը փորձեց գլուխը վեր առնել, բայց չկարողացաւ միայն մարմնի շարժուելով ոտքերի և օղակի շղթաները շաշեցին։

— Հա, քենչիշ, ինչպէս է քէֆդ. Տնչեց յանկարծ նկուղի մէջ ձահոռուխի ծազրող ձայնը.

Կապեալլ շատասախանեց. Նրան մինչև անգամ, յուրեց այցելուի ծաղրը.

— Մնշուշտ, գոհ ես րո վիճակից և շարունակ աղօթում ես. այնպէս չէ, հեզնէց բէկը նորէն և մի քայլ առաջ անցաւ:

— Գոհ եմ և աղօթում եմ... պատասխանեց երէցը կիսաձան:

— Եեմ զարմանում, հայ չես յարեց բէկը և ապա դառնալով իրեն հետեւող բանտապետին՝ ասաց. — Եյստեղ անկարելի է շնչել. վերև հանիր սրան:

Եյս ասելով Շահոռուխը գուրս գնաց և բանտապետը մօտենալով երէցին՝ արձակեց ձեռները գելարանից. հանեց օղակը պարանոցից և թողնելով միայն ոտքերի շղթաները՝ առաջնորդեց նրան դէպի վեր:

Մտնելով բանդապետի սենեակը, Շահոռուխը սպասում էր երէցին և միննոյն ժամանակ մտածում թէ՝ ի՞նչ եղանակով սկսէ զըոյցը, որպէսզի յաջողութիւն ունենայ. — Արդիօք բարկութեամբ ու սպառնալիքով, թէ քաղցրութեամբ և համոզիչ խօսքերով, "շնչում էր նա ինքնիրեն:

Մինչև երէցի տեսնեն, այս, նա այն կարծիքին էր թէ կապանքների խստութիւնը ճնշած կլինի կապեալլ կամակրութիւնը և, հետեսապէս, մի քանի նոր սպառնալիքներ կյաղթահարեն նրան բոլորովին. Բայց երբ իւր արած ծաղրական հարցի պատասխանը լից, նա համոզուեցաւ որ քահանայի մէջ տակաւին չէ ընկճուել հոգեկան արիութիւնը: Ուստի որոշում էր խօսել նրա հետ կարելոյն չափ մեղմ և ամոք եղանակով:

Բայց ի՞նչ յաջողութիւն էր սպասում բէկը: Միթէ, արդարև, նա հետաքրքրուում էր քահանայի կրօնափոխութեամբ, կամ մտածում էր այն մասին թէ շահին ան-

պատուղը անպատճառ պիտի պատժուի: Ի հարկէ, ոչ
նա իբրև մինը բնութեան այն այլանդակութիւններից,
որոնք ապրում և վայելում են կեանքը միշտ ուրիշների
կենաց և արեան գնով մտածում էր միայն իւր հաճոյր-
ների, իւր զգայական զուարձութեանց մասին: Նա չէր
մոռանում այն աղջկան, որին մի օր խլել էին իրենից,
չէր մոռանում և այն անպատռութիւնը, որ կրել էր նրա
պատճառով: Եւ ահա այժմ, երբ բաղդը յաջողում էր ի-
րեն, նա կամենում էր օգտուիլ այդ յաջողութիւնից: Նա
տեսնում էր հակառակորդին իւր ճանկերում, ուրեմն և
պիտի ճնշէր նրան որքան ոյժերը կժոյլատրէին, մինչև
որ կդարձնէր իւր հին կորուստը, մինչև որ կլուծէր իւր
պատուի վրէժը....

Երբ երէցը ներս մտաւ՝ Ճահոռուխը հրամայեց բան-
տապետին հեռանալ: Ապա դառնալով քահանային, որ
հիւծուած դէմքով և տխուր աշքերով կանգնել էր իւր
առաջ, հարցրեց:

— Ճանաշնամ ես դու ինձ:

Երէցը նայեց նրա վրայ դէմքի խաղաղ արտայայ-
տութեամբ, հազիւ նշմարելի արհամարհանքով և ապա
հայեացքը դարձրեց ուրիշ կողմ:

— Ե՞ս պատասխանում ինձ, հարցրեց Ճահոռուխը
կրկին:

— Ճանաշնում եմ. պատասխանեց երէցը անփոյթ ե-
ղանակով:

— Ի հարկէ, կճանաշես: Բայց ինչ կարծիք ունիս
այժմ իմ մասին:

— Քաջ ես և հզօր, պատասխանեց երէցը հեգնո-
րէն:

— Այդքան միայն:

— Եւ ամենակարող.

— Այդ է ճիշդ պատասխանը, յարեց Ճահոռուխը ժըպ-
լութեան ը.

տալով. ապա, կարծես, համոզուած որ երէցը խօսում է լրդութեամբ, աւելացրեց.—Այժմ ես կյայտնեմ քեզ իմ այցելութեան պատճառը։ Քո յանցանքը, բարեկամ, ամենածանրն է և աններելին։ Ուստի արքայի հրամանը պիտի համարես անդառնալի։ Դու կամ պիտի մեռնես և կամ մահմեղականութիւն ընդունես։ Ազատութեան ուրիշ եք չունիս։

— Կմեռնեմ, պատասխանեց երէցը։

— Բայց ես կամենում եմ փրկել քեզ. ես խնայում եմ քո երիտասարդութիւնը։

— Ծնորհակալ եմ։

— Ես խնայում եմ քեզ, նա և, իբրև իմ հայրենակցին, դու պիտանի մարդ ես և ափսոս է որ մեռնես։

— Եթէ Աստուած մահ է սահմանել ինձ համար, մարդիկ չեն կարող այդ մահն արգիլել։

— Բայց դու ասացիր որ ես ամենակարող եմ. ուրիմն հաւատա որ պիտի փրկեմ քեզ։

Երէցը զարմացած նայում էր Ճահռուլսին և չէր կարողանում հասկանալ թէ՛ ինչ տարօրինակ հոգածութիւն է այս որ իւր նախկին հակառակորդը ցոյց է տալիս այժմ իրեն։

— Այս, պիտի փրկեմ, կրկնեց Ճահռուլսը, բայց դրա համար կպահանջեմ քեզնից մի թեթև վարձատրութիւն։

— Այսինքն։

— Այսինքն վարձատրութիւն, որը քո մեռնելուց յետ, անկասկած, պիտի հասնէ ինձ, բայց ես կամենում եմ որ քո ձեռքով լինի տրուած։

— Ես, ինչպէս գիտէք, մի աղքատ քահանայ եմ և գանձեր չունիմ, պատասխանեց երէցը. կարծելով թէ բէկը, իբրև արծաթասէր պարսիկ, կաշառի համար է խօսում։

— Օ՛, դու ունիս մի գանձ, որ ինձ կարող է լիուլի

գոհացնել, յարեց ծահոռուխն աշխուժով:

— Ի՞նչ գանձ է այդ:

— Եւ որը, գուցէ, կորցրել է իւր յարգը քո աշ-
քում: Այդպէս է աշխարհում առ հասարակ: Ամենալա-
րանն իսկ ձանձրացնում է մարդուն, երբ նա այդ լաւը
շարունակ իւր ձեռքում, իւր մօտն է ունենում....:

— Բայց ի՞նչ գանձի մասին է քո խօսքը, ընդհա-
տեց երէցը մի առանձին հետաքրքրութեամբ:

— Եւ երբ մի բարիք իւր յարգը կորուսած է,
կամ, գոնէ, սիրելի չէ այսքան, որքան էր ա-
ռաջ, լաւ է որ այդ բարիքը տալով կեանքդ աղատես,
քան պահպանելով նրան՝ մեռնես: Մարդու մահուանից
յետ, հօ գիտես, նրա ունեցածը ուրիշներն են վայելում:

— Բայց ասա վերջապէս, ի՞նչ բարիքի մասին է
խօսքդ:

— Այն, որն ըստ օրինի ինձ պիտի պատկանէր,
բայց դու խլեցիր:

Երէցը հասկացաւ չար պարսկի միտքը և վրդովուե-
ցաւ: Նրա դալկահար դէմքը շառագունեց և շրթունքները
յուզմունքից դողացին:

— Անշուշտ գուշակեցիր որ Վարդիթերի մասին է
խօսքս, շարունակեց բէկը. այն, նա է քո փրկութեան
գինը. նրան ինձ տալով դու կազատուիս կախաղանից:

— Բէկ... բացագանչեց երէցը խուլ ձայնով և, կար-
ծես, զայրոյթից խեղուելով:

— Ի՞նչ, դու համաձայն չես. դու, մինչև անդամ
յուզմամբ ես. յարեց ծահոռուխն այնպիսի մի եղանակով
որ կարծես խօսում էր հասարակ մի վաճառքի մասին:

— Հրամայիր որ ինձ նորէն իմ արգելարանը տա-
նեն, ինդրեց քահանան:

— Ես քեզ հետ խօսում եմ, իսկ դու արգելարանդ
ես վերադառնում:

Ես չեմ կարող քեզ լսել:

— Թշուառական, գու չես կամենում մեծափառ շահնշահի սենեկապետին լսել... գոչեց Շահուլիսը բարկութեամբ:

— Հաճիր հրամայել որ ինձ հեռացնեն այստեղից, կրկնեց քահանան աւելի հաստատ ձայնով:

— Խորհուրդ եմ տալիս քեզ՝ լսել ինձ. ես քո բարեկամն եմ. խօսեց բէկը՝ նորէն խաղաղելով. — Հակառակութեամբ ոչինչ չես շահի. որովհետև դու անզօր ես, իսկ ես՝ զօրաւոր. դու գերի ես, իսկ ես՝ հրամայող: Այն վայրկենից որ այդ շղթաները ոտքերիդ զարկեցին, քո գոյքն ու հարստութիւնը դարձաւ իմ սեպհականութիւն: Ուրեմն այն, ինչ որ ես պահանջում եմ, կըստանամ և առանց քեզ, միայն թէ՝ ինչպէս առաջ էլ ասացի, ցանկանում եմ որ այդ մնիք քո կամքով և հաճութեամբ, որպէս զի դրա փոխարէն՝ ես էլ քո կեանքն ազատեմ և իմ խղճի տուազ պարտապան շմանամ քեզ ոչնչով:

— Քեզ մինչև վերջը լսեցի, բէկ, և մեծ ոյժ գործ դրի լսել կարողանալու համար... այժմ աղաչում եմ վերջին անգամ. հրամայիր հեռացնել ինձ այս տեղից. ես չեմ կամենում աւելին խօսել:

— Ապաւշ, չես քեզ խօսք եմ ասում, իսկ դու քննն ես կրկնում: Իմացիր որ քո առաջ երկու ճանապարհ կայ միայն. կամ նամակ պիտի գրես ծնողներիդ՝ և պատուիրես՝ որ Վարդիթերը դրկեն ինձ մօտ, (իբր թէ քո գործի առթիւ հարցափորձուելու), և ինքդ սպասես ազատութեան և կամ դահիճների հետ պիտի քարշ գաս մինչև ձահի դուռը՝ այնտեղ հրապարակով մեր սուրբ կրօնն ընդունելու: Ընտրիր այդ երկուսից որն էլ կամենաս. բայց ընտրիր շուտով. առանց ժամանակ կորցնելու:

Երէցի յուզմունքը հետզհետէ աճում էր. նա խուկ

հառաջում և ծանր շունչ էր քաշում. կարծես թէ սիրաը
պատրաստում էր պայթելու:

— Ես քեզ խորհուրդ եմ տալիս ընտրել փրկութեան
ճանապարհը, շարունակեց բէկը տեղից վեր կենալով և
երէցին մօտենալով.— Ի՞նչ բան է կինը, արժէ միթէ նրա
պատճառով մեռնել կամ կախուել... նա փոխադրական
մի ստացուածք է, այսօր բռն է, վաղը ուրիշինը... գրիք
որ դրկեն նրան ինձ մօտ և թող դրկեն հէնց այս երե-
կոյ, իսկ վաղը դու ազատուած կլինիս....,

— Դարշելի սրիկայ, պիտի լո՞ես թէ ոչ, գոշեց ե-
րէցը դայրութից դողդալով և այլագունելով.

— Ի՞նչ, «գարշելի», սրիկայ,» այդ դմւ ասացիր, ան-
հաւատ շուն, դու մինչև այդտեղ լրբացար... այս ասե-
լով բէկը մի զօրաւոր ապտակ իշեցրեց խեղճ կալանա-
ւորի դէմքին: Երէցն, որ արդէն ուժազուրկ էր, երերաց,
և որովհետև ոտքերը կապուած էին, կորցրեց հաւասա-
րակշռութինը և գլորուեցաւ յատակի վրայ:

— Այստեղ եկէք, դուրս հանեցէք այս անզգամին,
քարշեցէք նրան շահի դուռը. թող նա այնտեղ, դահճի
հարուածների տակ փչէ իւր պիղծ հոգին... գոռաց Շահ-
ուլիսն աղմկարար ձայնով և բանտապետն ու պահապան-
ները ներս թափուեցան իսկոյն:

— Այս անհաւատ շունը ոչ միայն չի ուզում մեծա-
փառ շահի հրամանը կատարել, այլև հայհոյում է Կըրլէյը-
Նլէմին և մեր սուրբ ու մեծ Մարգարէին... դուրս հա-
նեցէք սրան, դահճներ կանչեցէք, վարոցներ պատրաս-
տեցէք, թող այսօր և եթ շանսատակ լինի սա, շարու-
նակում էր Շահուլիսը գոռալով ու փրփրալով:

Պահապանները վեր քաշեցին երէցին կոպտաքար
և անողորմ հարուածներ իշեցնելով նրա դէմքին, կըրծ-
քին ու թիկոնքին, սկսան նորից ձեռքերը շղթայել և
պարանոցն՝ անուրներ անցցնել: Ապա դուրս հա-

նելով բանտի բակը, յանձնեցին նրան դահիճների ձեռքը։

Վերջիններս, Զահոռուխի հրամանի համաձայն, առաջ-նորդեցին զոհին ղէպի շահի դուռը։ Խոկ ինքը, բէկը, ձին աշտանակելով շտապեց արքայի մօտ, իւր այցելութեան արդիւնքը նրան յայտնելու համար։

ԺԵ.

Այն միջոցին որ գտհիճները Տէր-Ասդրէասին շահի դուռը բերին, հայոց երևելիները, իրենց առաջնորդի և քահանաների հետ միասին, զտնուում էին արքայական ապարանքի սրահում։ Նրանք եկել էին թողութիւն խնդրելու, թշուառ կալանաւորի համար։ Բայց մինչև նրանց թագաւորին տեսնելը՝ Զահոռուխն արդէն ներկայացել էր վերջինիս և յայտնել նրան թէ կալանաւորը ոչ միայն արքայի հրամանը չէ կատարում և մահմեղականութիւնն չէ ընդունում, այլև հայնոյում է վեհափառ շահին և մեծ փէյդամբարին։ և թէ այդ պատճառով ինքն յանձնել է նրան դահիճների ձեռքը՝ թագաւորի դուռը բերելու համար։

Եյո յայտնութեան հետ միասին բէկը բարդեց քահանայի վրայ, նաև, այնպիսի զրպարտութիւներ, որոնք շահի գայրոյթը սաստիկ դրդուեցին։ Նա դուրս ելաւ անմիջապէս յանդրուդն կալանաւորին տեսնելու և անձամբ հրամայելու՝ որ գանակոծեն նրան իւր իսկ աշքի առաջ։

Պատահելով սրահում հայոց երևելիներին՝ շահը բարկութեամբ հարցրեց թէ ինչներ համար են ժողովուել։

— Եկել ենք Մեծափառ Վեհափետիկ ոտքերը համբուրելու և համայն Սիսականի ժողովորեան կողմից թո-

դութիւն խնդրելու այն քահանայի համար, որ անմտանալով՝ արևափայլ ձահնշահիդ արդար զայրոյթը գրգռեց:

Այս խօսքերով մօտեցաւ թագաւորին առաջնորդ վարդապետը և ծունկ չողելով նրա առաջ՝ կամեցաւ ոտքերը համբուրել:

Նոյն ձեռվ գետին խոնարհեցին, նաև, առաջնորդի հետեւրդները:

Ձահը զայրոյթից կատաղեց:

—Թշուառականներ, ի՞նչպէս էք համարձակւում թողութիւն խնդրել մի սրիկայի համար, որ յանդնել է անարգել իրանի հզօր զահակալին, ձեր թագաւորին և վեհապետին, գոռաց նա վարդապետի վրայ:

—Երիտասարդական անփորձութիւնը, տէր, մոլորեցրել է նրան. եթէ մեծափառ շահը հաճի այս անգամ արժանացնել յանցաւորին իւր մարդասէր գթութեան, այսուհետև նա Ձահնշահի ջերմեռանդ երկրպագուն կըդառնայ:

—Կարճիր լեզուդ, ապուշ, Ձահնշահը ունի բիւրաւոր երկրպագուներ, նա կարօտ չէ մի ոինլքոր սեազգեստի երկրպագութեան:

—Բայց խեղճ սեազգեստը, նրա զառամեալ ծնողները և անմիտիթար ամուսնը կարօտելով կարօտում են մեծափառ Ձահնշահի գթութեան...:

—Եթէ կամարձակիս երկրորդել խնդիրդ, քեղ կախել կտամ իսկոյն, գոչեց թագաւորը զայրագին:

Վարդապետն յետ կասեց՝ երկիւլից այլագունելով:

Բայց նրա հետեւրդներից մի քանիսը, որոնք յայտնի մելիքներ և ազնուականներ էին, առաջ անցնելով՝ ծունկ խոնարհեցին թագաւորի առաջ և աղաչեցին՝ որ շահը հաճի փոխել յանցաւորի պատիթը դրամական տուգանքի, (ինչպէս նա անում էր յաճախ), և այդ տուգանքը յանձն էին առնում վճարել իրենց սեպհականութիւնից:

Նոյնը խնդրեցին, նաև, հարուստ խոջաները:

Չնայելով որ դմանօրինակ խնդիրներ լսելը և այ-
նոնց կատարելը սովորական էր շահի համար, (ըստ որում
նա շատ անգամ բանտարկում ու պատուհասում էր՝ միայն
և եթ տուգանքներ կորզելու նպատակով), այսու ամե-
նայնիւ մելիքների խնդիրը նա անտես արաւ այս անգամ:

Եանցաւորը պիտի պատժուի, տուգանքը չի փրկիլ
նրան, գոչեց շահը բարկութեամբ. և ապա սպառնալով
որ նոր խնդիր առաջարկողը անմիջապէս կպատժուի,
հրամայեց որ ամենը իշնեն ապարանքի առաջ բացուող
հրապարակը՝ մեղապարտի կրելիք պատժին ներկայելու
համար:

Ի՞նչ նոր պատիժ պիտի կրէր երէցը, խնդրար-
կու հայերը չգիտէին. բայց և այնպէս, նրանցից ոչ ոք
ձայն հանել չիշխեց: Թագաւորն իւր հետեւորդներով դուրս
ելաւ պատշգամը, որ նայում էր յիշեալ հրապարակի
վրայ, իսկ հայ երևելիները իշան նոյն տեղը՝ իրենց ա-
նուան համելիք նախատիւքը տեսնելու:

Այն միջոցին որ շահը երեաց դրսում, հրապարակն
ամբողջապէս լցուած էր ժողովուրդով: Որովհետև Ազու-
լեցիր տեսնելով Տէր-Մադրէասին շահի դուռը բերելիս,
հետեւել էին նրան գունդագունդ: Շատերն էլ առաջուց
ժողովուած այլտեղ՝ սպասում էին պատգամաւոր հայերի
միջնորդութեան հետեւանքին:

Ճահը գոհ եղաւ այդ բազմութիւնը տեսնելով, որով-
հետև ցանկանում էր որ տրուելիք պատիժը երկիւղ աղ-
դէ շատերին: Բայց ժողովուրդը ուրիշ նորութեան էր
սպասում: Նա կարծում էր թէ՛ շահը յարգելով հայ
մեծամեծների միջնորդութիւնը, բերել է տուել երէցին՝
որպէս զի նրան ներումն չնորհէ հրապարակով:

Եւ ահա պատշգամից շահի ձայնը լսուեցաւ: Նա
հրամայեց մօտ բերել յանցաւորին:

Տէր-Մնդրէասն առաջ անցաւ։ Նրա տխուր, դալկահար դէմքը և շլթաներից ճնշուող բալուածքը ծանր տպաւուրթիւն արաւ շրջապատողների վրայ, ուստի և շատերի կրծքից հառաչանքներ թռան։ Այդ երեկի յանցանք էր։ Փարրաշները յետ մղեցին հառաչել համարձակուողներին և ոմանց էլ հարուածներ հասցրին։ Բայց երբ թագաւորի ձայնը նորից հնչեց, ամեն մի շարժում իւր տեղը սառեցաւ։

— Կատարեցիր դու իմ հրամանը, հարցրեց շահը երէցին։

— Ես բանտարկուեցայ խաւարտչին զնդանում և կրեցի այն բոլոր տանջանքները, ինչ որ Շահնշահի հրամանը որոշեց... նուաղած ձայնով պատասխանեց քահանան։

— Այս մասին չէր իմ հարցը. պատրաստուեցար արգեօք դաւանածդ կրօնը թողնելու։

— Իմ կրօնը թողնելու... այդ մասին չեմ էլ մտածել։

— Բայց ես հրամայեցի քեզ։

— Իսկ ես պատասխանեցի թէ՛ չեմ կարող այդ հրամանը կատարել։

— Եւ պնդում ես դու քո պատասխանի վրայ։

— Պնդում եմ։

— Եւ չի պիտի դառնաս այդ որոշումից։

— Երբէք։

— Դահիճներ, մերկացրէք այդ անդգամին, գոչեց թագաւորը, և ապա դառնալով հայոց մեծամեծներին զայրացած հարցրեց։

— Մրա համար էիր միջնորդում...։

Ոչ ոք չպատասխանեց։

— Գոնէ խոստովանում էք յանցաւոր լինենիդ... հարցրեց նորէն շահը, բայց այս անդգամ այնպիսի եղա-

նակով, որից կարելի էր գուշակել թէ՛ ինչ փոխորիկ պիտի բարձրանայ՝ եթէ հայերից մինը համարձակուի արդարացնել իրեն։

— Յանցաւոր ենք, տէր, ձայն տուին վերջիններս, գրեթէ միաբերան։

— Թող ուրեմն ձեր յանցանքն ևս քաւէ այս կամակորը, յարեց թագաւորը և ապա դառնալով դահիճներին՝ որոնք երէցին մերկացրել էին կիսով չափ, հրամայեց, — պառկեցրէք դրան գետնի վրայ և հարուածեցէք։ Թող գաւազանները հասկացնեն դրան այն, ինչ որ Շահնշահը անկարող եղաւ հասկացնել։

Բոնաւորի հրամանը կատարուեցաւ։ Դահիճները գլորեցին երէցին գետնի վրայ և սկսան ձաղիկել գաւազաններով։ Մկրում խեղճ դոհը աշխատեց տոկալ. կամեցաւ կրել տարապարտ պատիժը եկեղեցւոյ նահատակին վայել համբերութեամբ. բայց երբ անդութ հարուածները սաստկացան, ուժազուրկ մարմինը անկարող եղաւ այլ ևս հանդուրժել։ Նա սկսաւ հեծել և մոնշալ նախ խուլ և ապա բարձր ու աղիողորմ ձայնով...։ Եւ այդ ձայները, որոնք կրկնում էին ամեն մի հարուած իջնելու ժամանակ, կարծես իբր շանթեր մխւում էին շրջապատող հայերի սրտերը և կեղեքում նրանց։ Երէցի հետ միասին հեծում ու հառաջում էին հարիւրաւոր մարդիկ. և դրանցից իւրաքանչիւրն՝ հարուածի պատճառած մորմորիշ ցաւը գգում էր իւր վրայ։

Փոքր մի ևս, և ահա, ամբոխի մէջ սկսաւ խլրտում։ Մարդիկ բարձրածայն գոռում ու գոշում էին. ոմանր խնդրում էին Շահին պատիժը դադարեցնել. իսկ ուրիշները հայոյում ու անիծում էին դահիճներին։ Կային և այնպիսիք, մանաւանդ անժոյժ երիտասարդներից, որոնք ձգտում էին բեկանել զինուորների շղթան և առաջ վագելով յափշտակել գոհը դահիճների ձեռքից։ Մակայն

մտրակների հարուածներն, որոնք տեղում էին ազ ու ձախ, յետ էին կասեցնում յանդուգն ձեռներէցներին։

Այն միջոցին որ զահը իւր ուշադրութիւնը դարձուց խլիտող կողմի վրայ և պատրաստում էր հրամայել հալածել աղմկարալներին, ամբոխի միջից դուրս վազեց մի սպիտակահեր ծերունի և դողդոջուն բազուկները դէպի վեր տարածած՝ աղաչում էր ֆարրաշներին թոյլ տալ իրեն մօտենալ զահին։

Թագաւորը տեսաւ ծերունուն և հրամայեց մօտ բերել նրան։

— Ո՞վ ես դու և ինչ ես կամենում, հարցրեց նա, երբ ծերուկը չոփեց պատշգամի առաջ։

— Ես այս դժբաղդ քահանայի հայրն եմ, տէր արքայ, պատասխանեց ծերունին լալածայն, Աստուած չէ զրկել քեզ որդիներից և դու կարող ես չափել մի թըշչուառ հօր կսկիծը, երբ նա տեսնում է իւր առաջ սիրած որդուն գետնատարած, անգութ հարուածների տակ հեծելիս... Դիմա, տէր արքայ, ապաբաղդ հօր արտասունըներին. ազատիր որդուս կահիճների ձեռքից. բաւ համարիր նրան իւր տառապանքները և Աստուած կօրհնէ քեզ քո գթասրտութեան համար...։

— Դտղարեցրէք. հրամայեց զահը դահիճներին. ապա դառնալով ծերունուն՝ ասաց. — կամակոր որդի ես ծնել և անհնազանդութեան վարժեցրել. արժանի ես, ուրեմն, այն կսկիծին, որ կրում ես ահա ծերութեանդ օրերում...։ Բայց եթէ, արդարն, ծանր է քո կսկիծը, գնա, մօտեցիր որդուդ և խրատէ նրան իմ հրամանը կատարել. թող նա ի՞ւր մոլար կրօնը թողնելով դառնայ Մահմեդի ուղիղ հաւատին։ Այն ժամանակ ես նորան ոչ միայն կրելիք պատիճներից կազատեմ, այլ և կհասցնեմ մեծ պատուի ու փառքի. իմ իշխաններից մեծագունին կիեսայացնեմ և իմ արքունիքում պաշտօնատար կկարգեմ։

Եերունին պլուխը խոնարհեց:

— Հա, ի՞նչ ես ասում. ընդունում ես պայմանս
թէ՛ ոչ:

— Տէր արքայ. խնայիր իմ ծերութեանը, աղաչում
եմ. խնայիր անզօր ծնողին. թախանձեց ծերունին ար-
տասուրը զառամած այտերի վրայ ծորեկով:

— Չլսեցիր ի՞նչ ասացի, ծերուկ, բարկացաւ ձահը:

— Լսեցի, տէր իմ, բայց....

— Ի՞նչ:

— Անհնարին պայման է առաջարկածդ...

— Թշուառական. ի՞նչպէս ես ուրեմն համարձակւում
ներումն հայցել:

— Աստուած, որ զրկել է մեզ ամեն իրաւունքներից,
թողել է գէթ մի մսիթարութիւն, տէր արքայ. այդ
խնդրելու և հայցելու իրաւունքն է. մի կապտիր այն մե-
զանից. մի զրկիր մեզ այդ միակ...

— Ճատախօսում ես, ծերուկ, ընդհատեց թագաւորը.
գնա, համոզիր որդուդ կատարել իմ հրամանը. ես խնա-
յում եմ նրա երիտասարդութեանն և առնական գեղեց-
կութեանը, թող ինքն ևս խնայէ իրեն, թող արքունիքը
գերադասէ բանտից և արքայական շնորհները՝ անարդ
գանակոծութիւնից.

Եերունին լուռ էր, բայց հայեացքը սկեռած թա-
գաւորի վրայ:

— Գնա և համոզիր որդուդ, հրամայում եմ քեզ:

Եերունին անշարժ էր:

— Եթէ մի փայրկեան աւելի գանդաղես՝ կհրամայեմ
քեզ ևս ձաղկել, գոչեց թագաւորը:

— Զեմ գանդաղիլ, տէր իմ, ասաց ծերունին և շուռ
գալով դէպի որդին բարձր ձայնով գոչեց.

— Անդրէ, իմ սիրեցեալ զաւակ. թող դահիճների
փոխարէն՝ դեեր կոչեն դժողքից. թող փայտի փոխարէն՝

վարոց բերեն երկաթից. թող հարուածեն քեզ անխնայ. դու մի սասանիր. կրիր ըո Խաչը. կրիր անտրտոնջ. հային վայել համբերութեամբ. մեռիր, որդեակ, բայց մի ուրանար մեր լոյս հաւատը. մեր Լուսաւորչին...

Եերունին դեռ խօսում էր, երբ ձահը որոտաց.

— Լոեցրէք այդ անզգամին:

Հսկահասակ մի սարվազ յարձակուեց ծերունու վրայ և բռունցքի շեշտակի հարուածով գետին գլորեց նրան:

— Զէ, չի ուրանալ... մեր սուրբ հաւատը... մեր լոյս հաւատը... մրմնջում էր դեռ ծերունին մինչ կատաղի սարվազը անզթարար հարուածում ու կոխկրտում էր նրան:

Դահիճներն այս տեսնելով իրենք էլ երէցի պատիժը նորոգեցին: Բայց հազիւ թէ մի քանի հարսւածներ իջեցրին և ահա ամբոխի մէջ բրդեց մի խուլ աղմուկ, որ հետզհետէ սպառնական կերպարանը առաւ: Յանկարծ զինուորների շղթան կտրուեցաւ, ֆարրաշների շարքը խանգարուեց և ամբոխն աղաղակով յորդան տուաւ դէպի առաջ:

Ինչի էր ձգտում յուսահատ ժսղովուրդը. ում դէմ էր խիզախում. ում հետ պիտի կուտէր. ինքն էլ չզիտէր. նա այդ վայրկեանին չէր էլ մտածում, նա յուզուել, գըրգըրուուել էր անօրէն բռնութեան դէմ և կամենում էր անպատճառ սիրած հովուին ազատել: Բայց ում ճանկերից. շէ որ հակառակորդը հզօր ձահաբասն էր...: Մի քանի վայրկեան ժողովուրդն ու զինուորները խառնուեցան իրար. հարուածներ տեղացին, մարդիկ գլորուեցան, մինչև անգամ, դահիճներից մի քանիսը փախան:

Բայց շուտով թագաւորի-ահարկու ձայնը որոտաց. հրամանատարները ներքե վաղեցին և մի գունդ սարվազներ արշաւասոյր ու սուսերամերկ հրապարակը մտան:

Ըյդրանն արդէն բաւական էր որ յուզումը դադա-

րէր։ Յարձակուողներն, արդարեւ, յիտ կասեցան. զինուոր-ները հրապարակը գրաւեցին և շահատակութեան գործը վերջացաւ նրանով որ մի քանի հոդի ծանր հարուած-ներ առին, մի քանի տաք-զլուխներ ձերբակալուեզան իսկ գանակոծուած երէցին, կիսամեռ վիճակի մեջ, նո-րէն բանտը տարին։

ԺԶ.

Օրը երեկոյացաւ. Հայոց թաղերը հետզհետէ խա-ւարում էին։ Ոչ որ այլ ևս չէր մտածում թէ՛ շահը դեռ ևս հիւր է Ագուլիսում. թէ ամեն ոք պարտաւոր է լու-սաւորել իւր տունը, կտուրն ու սարաւոյթը, թէ՛ պէտք է բակերում խարոյիներ բորբոքել և ընկեր, հարեան դը-րանց շուրջը ժողոված՝ մինչև կէս գիշեր խրախութիւններ անել. թէ՛ ժողովուրով խմբերով փողոցները պիտի պար-տէր և փողերով ու թմբուկներով օդը թնդացնէր. թէ՛ միով քանիւ, ամեն ոք պարտաւոր էր մասնակցել որ և է հրապարակական զուարճութեան և չի պիտի գտնուէր մի անկիւն ուր մարդիկ տիրէին, թէկուզ այդ անկիւնը լինէր սգաւորի տուն։

Սյդպէս էին արել Ագուլեցիք մինչև այդ օրը. և շահն ամեն անգամ իւր ապարանքի ապակեզարդ փեն-ջարէից նրանց հրապարակական խրախութիւնները տես-նելով ուրախացել էր և իւր գոհունակութիւնը յայտնել շրջապատող իշխաններին։

Բայց այսօր քաղաքը կարծես սուգի մէջ է. հայոց թաղերը խաւար, փողոցները դատարկ, երաժշտութեան ձայները լուած և միայն թուրքերի ու ֆռանկ կոչուած հայերի աննշան թաղերն էին, որոնք իրենց աղօտ լուսաւ-

րութեամբ յիշեցնում է շահին թէ բուն հայերն, սւրեմն,
չեն կամենում ուրախանալ:

— Այս ի՞նչ է, խան, հայերը կարծես կոտորուել են.
Նրանց թաղերում կենդանութեան նշոյլ չէ երևում. հար-
ցրեց Շահն Ամիրգիւնէին, որ եկել էր թագաւորին «բա-
րի երեկոյ» մաղթելու:

Խանը նայեց ապակեղարդ փենջարէի միջով և այն-
պէս ձեացրեց իբր թէ նոր է այդ բանը նկատում: Բայց
և այնպէս չկարողացաւ մի յարմար բացատրութիւն՝ գլա-
նել հայերին արդարացնելու համար:

— Գուցէ կրօնական սուգի օր է, խան, հարցրեց
Շահը հեգնելով:

— Զգիտեմ, տէր իմ, բայց եթէ հաճիս հրամայել,
խկոյն կիմանամ, պատասխանեց Ամիրգիւնէին, ընդ նմին
պատրաստուելով գուրս գնալ և հրաման արձակել որ կա-
տարուող անկարգութեան առաջն առնուի:

— Եթէ Շահը հաճի լսել, ես կբացատրեմ պատճա-
ռը, խօսեց Շահուուխը, որ կանգնած էր իշխանների հետ:

— Բացատրիր, հրամայեց թագաւորը:

— Հայերը չեն ուրախանում այն պատճառով՝ որ
Շահը ձաղկել տուաւ ըմբռստ քահանային. Այդ ցոյցով
Նրանք ցանկանում են վրէժինդիր լինել մեծափառ ար-
քային:

— Հաւանական չես գտնում այս բացատրութիւնը,
հարցրեց Շահը Ամիրգիւնէին:

— Եթէ իմ արեգակնակայլ տէրը հաւանական է
գտնում...

— Բոլորովին հաւանական, ընդհատեց Շահը զայրա-
գին. և ապա դառնալով Շահուուխին ասաց. — այս յան-
դուգն ժողովուրդը մի նժարի մէջ է դրել թէ մեղապարտ
քահանային և թէ իւր թագաւորին. քեզ եմ յանձնում,
բէկ, սանձահարել դրանց... վաղն և ելթ շտապիր բան-

տարկեալի մօտ և աշխատիր խոստովանել տալ նրան թէ նվեր են եղել իւր մեղսակիցները։ Անշուշտ, վաժուն աշակերտների գլուխները նա միայնակ չէ գերծել։ Բրածեն ուտելուց յետ՝ երէցն այժմ հեշտութեամբ կխոստովանէ ճշմարտութիւնը։ Ապա անմիջապէս կալանաւորել տուր ցոյց տուած մարդկանց և հրամայիր գանակոծել նրանց հրապարակով։ Թող այնուհետև հայերը մի մարդու փոխարէն՝ շատերի սուզը պահեն։

— Իսկ թէ չխոստովանէ, տէր իմ, հարցրեց բէկը։

— Ծաղկել կտաս նրան ամեն օր, մինչև որ նա կըստիպուի կամ ճշմարտութիւնը խոստովանել, կամ հաւատնուրանալ և կամ, վերջապէս, հարուածների տակ կմեռնի։

Գողին մուլթ գիշեր էր հարկաւոր և տրուեցաւ։ Հետեւալ առաւօտ ձահոռուխն շտապեց դէպի բանտ։ Նա դուրս հանեց երէցին զնդանի հրապարակը, ուր պատրաստ կեցած էին ոչ միայն վարոցաւոր զահիճներն այլ և մի վաշտ զօրք, որ պաշտօն ունէր ամբոխի խառնակութեան առաջն առնելու, եթէ այն տեղի ունենար։

— Եկայ քեզ յայտնելու շահի բարի կամքը, ասաց ձահոռուխը երէցին, երբ կանգնեցրին նրան իւր առաջ։ — Նա դթացաւ քեզ վրայ և կամենում է որ դու անպատճառ ագատուիս թէ կապանքներից և թէ զնդանից։

— Ծնօրհակալ եմ, թող Աստուած երկար կեանք պարզեւէ նրան, պատասխանեց երէցը կիսաձայն։

— Բայց նա ցանկանում է որ կապանքներից ազատուելուց առաջ յայտնես նրան այն մարդկանց անունները, որոնք գործակից եղան քեզ աշակերտների գլուխները գերծելու գործում։

Երէցի գումատ շրթոնքները շարժուեցան և նրա դալիահար դէմքի վրայ խաղաց մի սառն ու արհամարհական ժպիտ։

— Այս անդամ, անշուշտ դու խելօք կլինիս և ու-

բիշների պատճառով չես մատնիլ քեզ նոր տանջանքների,
յարեց ձահոռւխը:

— Հրամայիր, բէկ, որ նորէն տանջեն ինձ... ես իմ
ասելիքը ասել եմ արդէն շահի առաջ, ես գործակիցներ
չունիմ: Մի յուսաք բնաւ թէ մատնութեան գնով
կյօժարիմ երբ և իցէ ազատել ինձ տանջանքներից:

— Եթէ գործակիցներդ քո բարեկամներն են և դու
խնայում ես նրանց, դու ազատութեան ուրիշ ճանապարհ
ունիս. Թողիր կրօնդ և դարձիր մեր հաւատին: Այդ
քայլը կբախտաւորեցնէ բեզ:

— Մի խօսիր այդ մասին, բէգ. եթէ տասն անգամ
աւելի երկարացնէիք իմ կեանքը, բան որքան վիճակուած
է ինձ ապրել և լնդ նմին շրջապատէք ինձ այն արքա-
յական բարիքներով, որ վայելում է նրանի հզօր գահա-
կալը, ես դարձեալ իմ հաւատը չի պիտի ուրանամ, ա-
նարգանաց այդ աստիճանին ոտք չի պիտի դնեմ:

— Քեզ մնում է վերջապէս, մի երրորդ ճանապարհ...
այս ասելով ձահոռւխը մօտեցաւ երէցին և կամացուկ
ձայնով շնչաց նրա ականջում: — Խելօք եղիր. մի յամա-
ռիր. տուր ինձ նրան, զոհիր նրան և դու կփրկուիս...:

— Հեռացիր բէկ, դու քո թագաւորի ամենաանար-
ժան ծառան ես... ես աւելի սիրով իմ տանջանքները
կտանեմ քան քո պիտի շունչը, որ մօտենում է ինձ...
բացագանչեց երէցը և երեսը զգուանքով դարձուց նրանից:

— Գետին գլորեցէք և զարդեցէք այդ անզգամի յա-
մառ ոսկորները. ով չէ ուզում մարդու պէս ապրել նա
շան պէս պիտի սատակի, գոչեց ձահոռւխը կատաղու-
թեամբ և դահիճները դետին տարածելով թշուառ երէ-
ցին, սկսան գմնակոծել նրան անզթաքար:

Հնայելով որ բանաը գտնուամ էր աւանի մի հեռա-
ւոր անկիւնում, այսուամենայնիւ, այդ օրն էլ ժողովուած
էր այդտեղ մեծ բաղմութիւն, որ ներկայ եղաւ երէցի
լուսու ու.

տանջանքներին, լսեց նրա արձակած աղիողորմ ձայները, սիրտ կտրատող մռնչիմը, յուզուեցաւ, արտասուեց և սակայն իւր ցասումը արտայայտել չհամարձակեցաւ, որովհետև տեսաւ որ սուսերամերկ դինուըները փոքրիկ առթի են սպասում իւր. վրայ յարձակուելու:

Եւ երէցին գանակոծելուց դադարեցին այն ժամանակ, երբ խեղճի ձայնը բոլորսին կտրուեցաւ: Սպա նորէն շղթայի զարնելով՝ կիսամեռ վիճակի մէջ բանտը տարին նրան:

Իսկ այնուհետև, գրեթէ ամեն օր դուրս էին բերում նրան նոյն հրապարակը և միևնոյն ձևով ստիպում որ իւր գործակիցների անունները յայտնէ, կամ քրիստոնէական հաւատը ուրանայ: Երէցն, ինչպէս միշտ, մնում էր անյողգողդ: Ուստի եւ նորէն գանակոծում ու նորէն բանտն էին տանում: Նրա մարմինը թէպէտ արդէն ծիւրուել, ուժազուրկ էր եղել և մի զօրեղ հարուածից կարող էր անշնչանալ, բայց նրա հոգին տակաւին զօրեղ և արիութիւնն՝ անպարտելի էր: Նոյն իսկ իւր տանջանքների մէջ նա գտնում էր սփոփանք, այն մտածութեամբ թէ համայն Սիսականի ժողովուրդը ցաւում է իւր համար և համակում իւր վշտերով: Թէ դահիճների ամեն մի հարուածն՝ իւր մարմնին ցաւ պատճառելուց տուած մորմզում ու կսկծեցնում էր իւր տանջանքները դիտող հայ մարդկանց սրտերը... նա մխիթարում էր, մանաւանդ, այն հաւատով որ իւր տանջանքների գնով փրկել է դահիճների ձեռքից հարիւրաւոր հայ մարդիկ և արգելք եղել «մանկաժողովին», որ ամեն հայի տուն լաց ու կոծով պիտի լցնէր: Եւ չայս ամենը այնքան էր զօրացնում հայրենասէր երէցի հոգին, որ նա մոռանում էր իւր տանջանքները և յաճախ անզգայանում դէպի կապանքների խոտութիւնը:

Եւ սակայն իւրմով բարերարեալ հայերն ևս պարապ

չեին նստած, երբ նրանք տեսան թէ հայ մեծամեծների միջնորդութիւնը ապարդիւն անցաւ, մտածեցին դիմել շահի նախարարների և աւագանու բարեխօսութեան։ Դրա համար ՚ի հարկէ, հարկաւոր էր մեծաքանակ գումար. որպէսզի կարողանային իշխաններից իւրաքանչիւրին գոհացնել ըստ արժանւոյն։ Այդ նպատակաւ առաջաւոր հայերը դիմեցին ժողովարարութեան, որի արդինքը եղաւ սպասածից աւելի։ Որովհետեւ աղքատը չինսայեց իւր լուման, հարուստը՝ իւր ոսկինները իսկ կանայք և աղջկունք՝ իրենց զարդերը։

Աւագանին, ի հարկէ, չկարողացաւ մերժել հայերից առաջարկուած նուէրները, զի ըստ արժանեացն ու քանակին կարի գրաւիչ էին նրանք. ուստի և յանձն առաւ բարեխօսուել երէցի աղատութեան համար։ Բայց երբ նրանք միահամուռ ներկայացան թագաւորին և իրենց խոնարհ խնդիրն առաջարկեցին, վերջինս զայրացաւ, որովհետև գուշակեց որ այդ իշխանները դիմել են իրեն ոչ թէ կարեկցութեան զգացմոններից դրդուած, այլ գրաւուած հայոց առաւ ոսկիններից։ Այդ պատճառով ոչ միայն նրանց խնդիրը շընդունեց և աղաչանքներին չզիշաւ, այլ և երդուեց իւր գլխով՝ որ երբէք չի ներիլ ըստահակ քահանային մինչև նա սրտանց չի ուրանալ հաւատը և թլպատուելով՝ մահմեղական չի դառնալ։

Հայերի յոյսը բոլորովին կտրուեցաւ. Այլ ևս միջնորդելու ճանապարհ չէր մնում. Այդ պատճառաւ գործող անձնք աշխատելուց դադարեցին և թշուառ քահանայի վիճակը ժողոցին բաղդի կամքին։

Եւ սակայն հէնց այդ յուսահատութեան միջոցին՝ երեան եկաւ մի ուրիշ ոյժ, որ յոյս ներշնչեց լրուած սրտերին։ — Դա հայ կինն էր, որ գալիս էր իւր ժառանգական պարտքը կատարելու. այն է՝ տագնապի բոպէին այր մարդուն օգնութեան համնելու։ Եւ նա ասպարէզ

եկաւ ի գէմս Խօջայ Անձրեի կնոջ—Սառա խաթոնի, որն այդ միջոցին գտնւամ էր Ազուլիսում և որին ոչ միայն ճանաշում էր Շահաբասը, այլ և յարգում իր արժանաւոր կնոջ և նրան իրեն «մայր» էր անուանում:

—Դուք արդէն ձեր պարտը լիուվի կատարեցիք, թոյլ տուէք որ մենք էլ մերը կատարենք, ասաց Սառան ամուսնուն, երբ վերջինս յայտնեց նրան նախարարների միջնորդութեան անյաջողութիւնը:

—Ի՞նչ կարող էք անել, հարցրեց Անձրեը:

—Այն՝ ինչ որ դուք արիք, պատասխանեց Սառան-մենք ևս կերթանք միջնորդելու:

—Եւ ոչինչ չէք շահիլ, յարեց Խօջան:

—Բայց չենք էլ կորցնիլ աւելի՝ քան ինչ որ կորուսել ենք, եթէ շահը, մինչև անդամ, անտես անէ մեր խնդիրը, գէթ մեզ կմնայ այն մսիթարութիւնը թէ՝ մենք անդործ չնստեցինք, երբ այր մարդիկ գործում էին:

Խօջայ Անձրեը չհակառակեց, բայց ցանկացաւ այդ մասին առաջնորդ վարդապետի և հայնմեծամեծների կարծիքը հարցնել:

Վերջիններս ոչ միայն յուսադրական գտան խաթունի առաջարկութիւնը, այլ և, զգովեցին նրան՝ այդպիսի յաջող՝ միտք յղանալուն համար:

Եւ Սառան մտաւ հայ ընտանիքները՝ հրաւէր կարդալու իւր սեռի ներկայացուցիչներին:

ԺԷ.

Կալանաւոր երէցի հաստատակամութիւնը տեսնելով շահն իւր համբերութիւնը կորցրել էր արդէն: Ուստի երբ շահուուխը խորհուրդ տուաւ նրան արձակել իւր վերջին վճիռը, այն է՝ կամ բռնի մահմեղականացնել, կամ

գլխատել քահանային, նա սիրով ընդունեց այդ խոր-
հուրդը և հրաման տուաւ բէկին՝ մունետիկ շրջեցնել քա-
ղաքում և յայտնել բոլորին թէ՛ յանցապարտ երէցին եր-
կու օր ժամանակ է տրում իսլամի ուղղափառ հաւատն
ընդունելու և թղպատուելու. հակառակ դէպքում նա պի-
տի գլխատուի:

Երբ մունետիկները արքայի հրամանը յայտարարե-
ցին, հայերը երկիւղից սարսափեցան. Բայց հայուհիները,
որոնք Սառա-խաթունի հրաւէրը ընդունել էին սիրով,
յոյս տածեցին թէ՛ պիտի յաջողին Զահարասի ներողա-
մտութիւնը վաստակելու. Ուստի նոյն օրն և եթ, ահա-
զին բազմութեամբ դիմեցին Զահի ապարանքը, առաջ-
նորդ ունենալով իրենց Խօջայ-Անձրկի Շահից յարգուած
կնոջը:

Թագաւորն, որ փէնջարէի առաջ նստած խօսում էր
իւր իշխանների հետ և, ընդ նմին, աւանի ձորալանջերը
դիտում, զարմացաւ եղը յանկարծ ապարանքի բակը
կանանցով լցուած տեսաւ:

—Եյս ինչ է, ովքե՞ր են. ինչ են ուզում, հարցրեց
նա իրար ետեից, առանց սակայն իւր աշքերը բակը
խոնուող կանանցից հեռացնելու.

Իշխաններից մինը դուրս թռաւ իսկոյն պատճառն
իմանալու և վերադառնալով՝ յայտնեց թագաւորին հայու-
հիների գալստեան նպատակը:

—Յայտնիր նրանց թէ՛ իմ վերջին հրամանը յայտա-
րարուած է արդէն. թող ոչ ոք չյանդգնի յանցաւորի
մասին իմ առաջ խօսելու, հրամայեց թագաւորը:

Բայց հազիւ բանբերը շուռ եկաւ դուրս գնալու
Զահը կանգնեցրեց նրան.

—2է, խնդրարկու կանանց չպէտք է այդ ձեռվ վե-
րադարձնել իմ շէմքից. նրանք իրաւունք ունին նոյն իսկ
այս դահլիճը խուժելու հաւատալով որ այր մարդիկ չի

պիտի վրոնդեն նրանց...։ Ինքդ գուրս գնա, խան, դարձաւ Շահն Սմիրգինէին, և հասկացրու նրանց բաղցրութեամբ որ ես իմ վերջին ու անդարձ հրամանը արձակել եմ արդէն։

Սմիրգինէն խսկոյն տեղից ելնելով՝ իջաւ խնդրարկուների մօտ. սկսաւ խօսել և համոզել նրանց. բայց կանաքը այդտեղից հեռանալ չկամեցան։

—Բարի խանի հովանին թող անպակաս վլինի մեր գլխից, դարձաւ Սառան Սմիրգինէին։ Ճահի հրամանը յայտնի է մեղ. բայց մենք ցանկանում ենք որ մեր խնդրը ևս յայտնի լինի նրան։ Յայտնիր Ճահին թէ նրան կամենում է տեսնել իւր մայրը... ասա որ ոչ մի որդի իւր դրան շէմքից չի հեռացնիլ մօրը, առանց նրա խնդրը լսելու։

Սմիրգինէն կանդ առաւ մի վայրկեան. և որովհետեւ ինքը ևս ցանկանում էր որ Ճահն ընդունէ խնդրարկուներին, ուստի իւր յորդորը շարունակեց. այլ վերադառնալով թագաւորի մօտ՝ հաղորդեց նրան Խոջա-Մնձրի կնոջ խօսքերը։

—Իմ մայրը... նվ է իմ մայրը, խան. ես նրան վազուց եմ թաղել. մի գուցէ զառանցում ես դու, հարցրեց Ճահը զարմանալով։

—Ոչ, տէր իմ. այդտեղ մի կին քեզ իւր որդին է անուանում և պահանջում է որ դու չհեռացնես նրան քո տան շէմքից առանց իւր խնդրը լսելու, ասաց խանը. ձևացնելով իբր թէ, չէ ճանաշում Մնձրի կնոջը։

—Կանչիր նրան այստեղ. հրամայեց Ճահը շաթիրին և վերջինս դուրս վազեց։

Մի քանի վայրկեանից յետ ներս մտաւ Սառան, հետն ունենալով մի խումբ աւասրդ (տարիքաւոր) կանաք և մի նորատի գեղեցկուհի. նրանք ամենքն էլ հագած էին հարուստ զգեստներ և ազատ էին քօղերից։

ըստ որում Շահը չէր սիրում որ կանայք իւր դէմը ել-նեն քօղարկուած։

— Սառա-խաթննը... այդպէս էլ գուշակում էի... իսկ դու, խան, միթէ շճանաշեցիր նրան, հարցրեց թագաւորը։

— Վաղուց է չէր տեսել, շնչաց Ամիրգինէն։

— Քանի վեհափառ Շահը հիւր է մեր երկրում, խանի աշքերը չեն կարող հասարակ մարդկանց նշմարել. Շահնշահի փառքը ստուերի մէջ է թողնում նրա ծառաներին ու աղախիններին, յարեց իսկոյն Սառան՝ առաջանալով դէպի թագաւորը և երկրպագելով նրան։

— Բայց խանի աշքերը պիտի նշմարէին Շահնշահի մօրը, նկատեց թագաւորը ժպատակ։

— Եթէ խանը հաւաստի լինէր թէ շահը չի մոռացել այդ մօրը... վրայ բերաւ Սառան։

— Մոռանալ. երբէք. շահը չի մոռանում արժանիք ունեցողներին. Ես լաւ յիշում եմ թէ՞ նրափիսի հոգածութեամբ էիր հսկում դու Զուղայում ինձ համար պատրաստուող խրախութեանց վրայ. թէ ինչպէս էիր հոգում որ քո եղօր, Խօզայ-Խաչիկի տանը ամեն ինչ իմ աշքերը տեսնեն քաղցր և հաճոյական. Ես չեմ մոռացել թէ՞ ինչպէս քո մի խելօք ու աղջու խօսքով դու զրկանք պատճուեցիր ինձ... և սակայն այդ զրկանքը փոխանակ տելի անելու՝ սիրելի դարձրեց քեզ իմ աշքում... — Ո՞վ է ձեզանից այդ դէպը յիշում, դարձաւ Շահն իշխաններին։

— Ես չեմ մոռացել, տէր իմ, յառաջեց Ամիրգինէն։

— Պատմիր. թող իշխանները լսեն, ասաց թագաւորը ժպատակ։

— Երբ ես ու Զիլֆըգար խանը առաջին անգամ մըտանք Զուղայ՝ որպէս զի այդտեղ ընդունելութիւն պատրաստենք քեզ համար. տևանք որ տեղացի հայերը ամեն

ինչ պատրաստել էին մեր ցանկացածից աւելի։ Բայց երբ ուշադրութեամբ դիտում էինք այդ պատրաստութիւնները՝ տեսնելու համար թէ՛ չկայ արդեօք դրանց մէջ արքայիդ անհաճոյ մի թերութիւն, Զելֆըդար խանը նկատեց։

— Այս ձքեղ պատրաստութիւններին պահասում են մի քանի հատ գեղեցկուհիներ, որոնց հայ ժողովուրդը նուէր պիտի բերէ շահին....

Հայոց համար, լստ երևութիւն, ծանր ու անսովոր ընծայարերութիւն էր այդ։ Այսուամենայնիւ, նրանք մեր պահանջը մերժելու փորձ անզամ չարին։ Ամենալաւ ընտանիքներից ընտրուեցան եօթ գեղանի օրիորդներ, որոնց և, ինչպէս կը իշես, ներկայացրին արքայիդ խօջայնաշիլի ապարանքում....

— Այժմ ես կշարունակեմ, ընդհատեց թագաւորը։ բոլոր ընծաներից աւելի թանկագինն այդ գեղեցկուհիներն էին։ Բայց երկու զօրաւոր խաների պատրաստածը, այս տկար կինը յետ խլեց մի խօսքով։ Աղջիկները ներկայացել էին ինձ քողերով։ Երբ ես հրամայեցի բանալ դէմքերը, իսկ նրանք դժուարանում էին, Սառա-խաթունը բացականչեց։ — «Բացէք երեսներդ. ձեզ հրամայում է թագաւորը և ձեր եղբայրը»։ Երեակայիր խան, այդ եղբայրը բառը զինաթափ արաւ ինձ. սիրտս այդ ժամանակ քնքոյշ էր և դիւրազգաց։ Երբ աղջիկներն իրենց քողերը բացին, տեսայ որ զբնաղ են հիւրիների չափ։ Բայց ես որոշեցի չժառանգել ոչ մէկին։ Իմ հիւրընկալ տիրուհին նրանց ինձ քոյրեր» անուանեց։ Ի՞նչպէս կարող էի իսլամի համար նուիրական այդ անուններն անարդել...
— Այս, խաթուն, դրանք իմ քոյրերն են, իսկ դու այսօրուանից կը կոչուիս ինձ մայր, ասացի ես հանդիսաբար, և այդ օրից. ահա. այս հայուհին իմ մայրն է։

— Աւաղ, տէր իմ.՝ եթէ իմ վարմունքով զրկանք եմ

պատճառել քեզ, ապա ուրեմն ի զուր եմ պարծենում
թէ քո մայրն եմ ես, ասաց Սառան:

—Զրկանք. հչ, լաւ է եօթ քոյր ոմանալ քան եօթ
կին, եօթ քոյրերից սիրուիլը երջանկութիւն է, իսկ եօթ
կանանց գգուանրը՝ դժոխք: Քոյրն իւր սիրոյ համար
վարձ չի պահանջում, մինչդեռ կինը կթումաւորէ սիրտդ,
եթէ անվարձ թողնես իւր մի աւելորդ գգուանրը:

—Եթէ այդպէս է, ապա քո մայրն աղաշում է քեզ
ծնկաշոգ....

Այս ասելով Սառան ծնկան իջաւ թագաւորի առաջ.
Նոյնն արին և իւր հետեւորդները:

—Եթէ յանցաւորի համար է խնդիրդ, չի պիտի
լսեմ. ընդհատեց յանկարծ թագաւորը:

—Քեզ խնդրում են այժմ հազարաւոր մայրեր. քեզ
պաղատում են հազարաւոր քոյրեր. լսիր նրանց, տէր իմ,
նայիր նրանց արտասուլներին, բացագանչեց Սառան՝
ձեռքերը կողկողագին դէպի թագաւորը տարածելով:

—Լսիր, կին դու. խօսել սկսաւ շահը մեղմով, —
անցեալի յիշատակները ինձ մի փոքր զբաղեցրին և ես
մոռացայ թէ՝ ինչու համար ես դու այստեղ: Ես քեզյար-
գում եմ, իրրե մի կնոջ, որին մի անգամ ամայրա անունն
եմ տուել. ուստի և չեմ կամենում խօսել քեզ հետ խըս-
տութեամբ: Բայց գիտցիր որ ես չէի խնայիլ նոյն իսկ
իմ հարազատ մօրը, եթէնա ժտէր ներումն խնդրել ին-
ձանից մի ապիրատի համար. որ իւր թագաւոր որդուն
անարգել է հրապարակով....

—Սստուած, որ թագաւորների թագաւորն է և հա-
մայն տիեզերքի Արարիչը, ներում է յանցաւորին երբ նա
զղում է և քաւում իւր մեղքերը: Կալանաւոր բահանան
վաղուց զղացել է իւր արածի համար. իսկ նրա կրած
չարչարանքները քաւել են արդէն նրա յանցանքը: Ես հա-
մարձակւում եմ ներումն խնդրել, որովհետեւ հաւատում

եմ թէ՛ իմ թագաւոր որդին կցանկանայ հեանել իւր Ա-
բարիչ Աստծոն:

Ճահը մի վայրկեան լռեց և աշքերը շուրջ յածելով
կարծես, կամենում էր իշխանների ցանկութիւնը գուշակել:

Յանկարծ Ճահուուխն առաջ գալով՝ կեղծ կարեկցու-
թեամբ ասաց:

— Որրան ցաւալի է, տէր իմ, որ յարդարժան խա-
թունը իւր խնդիրն առաջարկում է քո երդումից յետոյ:
Եթէ նա վաղ ներկայանար...

— Օ՛, անհնարին է, մայր իմ, բացազանչեց շահը,
կարծես քնից վեր թռչելով. անհնարինէ. ես երդուել եմ
Աստուծոյ և իմ իշխանների առաջ: Ես չեմներիլ յանցա-
ւորին, մինչեւ որ նա իւր հաւատը չուրանայ:

— Աստուած կներէ երդմանդ՝ բարի գործ կատարե-
լուդ համար, ասաց Խսաթունը:

— Անհնարին է, ես երդուել եմ իմ զլխով:

— Հաղարաւոր բերաններ կօրհնեն քեզ սրտազին և
քո մեծափառ դլուխը աղատ կմնայ չարիքից:

— Ես վերջին խօսքն ասացի. յանցաւորը կամ պիտի
իւր հաւատն ուրանայ և կամ նշանակուած օրը գըլխա-
տուի:

— Գթացիր, տէր իմ, գէթ այս թշուառին, որի
մահն ու կեանքը գտնւում է քո ձեռքում... այս ասելով
խաթունը բարձրացաւ տեղից և առաջ քաշեց պառանե-
րի ետեր կծկուած գեղեցկունուն:

Վերջինս ծունկ չոգեց թաղաւորի առաջ և աղաչ-
տոր հայեացը ձգեց գահի պատուանդանին:

— Ո՞վ է սա, հարցրեց թագաւորը՝ հետաքրքրու-
թեամբ. դիտելով երիտասարդ կնոջը, որի գեղեցկութիւնը
կրկնապատկուել էր դէմքի վրայ ունեցած անոյշ տիրու-
թեան և աշքերում վտյլող արտասուրի պատճառով:

— Սա ամուսինն է այն դժբաղդ քահանայի, որին

Մեծափառ շահը կամենում է զլխատել, պատասխանեց Սառան:

—Մա այն աղջիկն է, որ սահմանուած էր Կըբլէյլ-Սլէմի աղիդհարէմի համար և որին, սակայն, իմ ձեռքից խլեց յանցաւոր քահանան, յարեց Շահուուխը, գրեթէ շլ-չնջալով:

Թագաւորն սկսաւ աւելի ևս ուշադրութեամբ նայել գեղեցկուհուն և մի վայրկեան լուսվիւնից յետ ասաց.

—Մրտանց ցաւում եմ որ ահաւոր երդումն արի. տպա թէ ոչ այս հանըմի արցունքների համար կներէի նրա ամուսնուն:

Այս ասելով թագաւորը վեր կացաւ տեղից և կամենում էր հեռանալ. Ոչ ոք պատճառը գուշակել չկարողացաւ:

—Լսիր վերջին խնդիրս, տէրդ իմ, բացագանշեց Սառան:

—Ես հեռանում եմ, որովհետեւ կամենում հրամայել՝ որ դու հեռանաս... հեռանում եմ, ոչինչ այլ ևս չխելու համար. ասաց շահը: Եւ այս խօսքերն արտասանուեցան այնպիսի եղանակով որ Սառա խաթունը յետքաշուեց երկիւղից. Բայց նրա փոխարէն գոշեց դէպի շահը երիտասարդ տիրուհին:

—Մեծափառ ալքայ, գէթ ինձ լսիր մի վայրկեան:

—Դու էլ ևս կամենում խօսել, դարձաւ թագաւորը դէպի նորատի կինը:

—Հրամայիր, տէր, որ իմ ամուսնու հետ միասին ինձ ևս զլխատեն, որովհետեւ նրա մահից յետ ես չեմ կարող ապրել:

Թագաւորը յառեց աչքերը երիտասարդուհու վրայ և դիտեց նրան մի վայրկեան. ապա ժպտալով ասաց.

—Դու պատուի ես արժանի ե ոչ զլխատման, ես բո վիճակը կկարգադրեմ և դու գոհ կինիս ինձանից....

Այս ասելով թագաւորը դուրս ելաւ իսկոյն։ Զահուուիսը հետևեց նրան։

Նրբ նրանք մտան առանձնարանը, շահը դարձաւ զահուուիսին։

—Այս ինչ հրաշալի գեղեցկուհուց ես զրկել ինձ, բէկ։

—Ոչ թէ ես, այլ Ամիրզիւնէ խանը, տէր. եթէ նտհանած շինէր ինձ պաշտօնից՝ այս աղջիկը վաղուց ըՄ-պահանում կլինէր. պատասխանեց զահուուիսը, ուրախանալով որ գէպքը յաջողում է իրեն չարախուել Ամիրզիւնէից։

Բայց շահը, կարծես, զսեց բէկի պատասխանը. նա ուրիշ մտքով էր զբաղուած։ Գեղեցկուհու արտասուող աչքերը նրա գումֆը շարժելու փոխարէն՝ ցանկական կըրքերն էին վառել։

—Ո՞վ անմիտ երիտասարդութիւն... բացագանչեց նա յանկարծ. ինչպէս հեշտութեամբ «կարողանում էի այն ժամանակ զրկանքներ պատճառել ինձ. որպիսի ունայն պարկեշտասիրութեամբ հեռացրի ինձանից Զուզայեցի գեղեցկուհիներին, և այն՝ այս պառաւի մի խօսքով... միթէ իրաւունք ունէի այդքան անմտաբար վերաբերուիլ դէպի կեանքը, որ այնքան կարճ է և որն ըստացել ենք Աստծուց լիուվի վայելելու համար... Այժմ միայն, երբ արդէն անցնում են առնական տարիքս, ես մտաքերում եմ իմ գործած սխաները և հազիւ կեանքի հաճոյըները գնահատում... ուշ է. այս. բայց և այնպէս, գեռ մահը շուտ չի հասնիլ. վայելենք ուրեմն կեանքը, որքան կարող ենք. վայելենք, քանի հրապուրիշ է նա մեղ համար...»

—Անշուշտ, տէր իմ, վրայ բերաւ զահուուիսը. — այդ իսկ պատճառաւ խորհուրդ տուի քեզ գալ Ազուլիս։ Բայց ափսէս որ անզգամ բահանան ծածկել է գեղե-

ցիկների մեծագոյն-մասը և այն՝ այնպիսի ճարպիկութեամբ
որ իմ հետաղոտութիւններն իսկ ապարդիւն անցան:

— Եւսակայն, իւր չար բաղդից, նա չէ կարողացել սեփ-
հական գեղեցկուհուն թագյնել, նկատեց թագաւորը:

Ճահոռուխը հասկացաւ շահի միտքը և շտապեց հե-
ռացնել նրա ուշադրութիւնը գեղեցիկ տիրուհուց, որին
ինքը իւր սեփհականութիւնն էր համարում.

— Այդ գեղեցկուհին, տէր իմ, անցցրել է արդէն
տարիքը. նա արժանի չէ Ճահնշահի բարեհաճ ուշադրու-
թեան, ասաց նա հոգածու եղանակով:

— Ճահն իւր սեփհական աշքերն ունի, բէկ, մի գուցէ
այդ հարսը քեզ էլ է գրաւել, նկատեց թագաւորը ժըպ-
տալով:

— Քաւ լիցի, տէր իմ. ես միայն քո հաճոյքի խո-
նարհ ծառան եմ, պատասխանեց Ճահոռուխը նոյնպէս
ժպտալով:

— Գիտեմ քո գաղտնիքները: Բայց դու անհոգ կաց.
ես չեմ զրկիլ քեզ: Այդ գեղեցկուհին միայն մի շա-
բաթ կվայելէ իմ չնորհը. իսկ այնուհետև ինքդ կա-
րող ես խնամել նրան՝ ինչպէս որ կցանկանաս: Միայն
թէ քահանան շուտ պիտի գլխատուի: Քանի նա այսպի-
սի գեղեցիկ կին ունի, հարկ չկայ այլ ես պատիժը յետաձգել:

— Բայց եթէ այդ կինը տհաճութիւն պատճառէ քեզ
իւր տխրութեամբ...

— Որքան միամիտն ես. կայ միթէ աշխարհում աւելի
բաղցը հաճոյք քան այն որ մարդ վայելում է արտա-
սուազ կինոջն իւր գրկերում սեղմելով... բացի այդ, բէկ,
ես դեռ չեմ պատահել մի կնոջ, որ աւելի ջերմութեամբ
չինէր գրկած ինձ հենց այն պատճառով, որ ես խել
եմ նրան իւր ամուսնուց: Կինը, որ ուժի երկրպագուն
է, աւելի է սիրում զինքը բռնաբարողին քան իւր հա-
ճութիւնը մուրացողին...

—Եթէ այդպէս է, ուրեմն մենք այդ հարսին ժամանակ կտանք միայն տասն օր:

—Ամուսնու մահը սպալու, հարցրեց թագաւորը:

—Այս:

—Հինգ օրն էլ բաւական է. որքան քիչ լայ նա, այնքան գոհ կլինի մեղանից: Դու այժմ շտապիր, մունետիկ շրջեցրու քաղաքում: Վաղը մինչև կէս օր ամեն ինչ պիտի վերջանայ:

—Իսկ եթէ քահանան յօժարուի ընդունել մեր հաւատը:

—Այն ժամանակ թող նա տէր լինի իւր կնոջը, որի փոխարէն, անշուշտ, հիւրիներ կտան մեզ ջէննաթում:

Ճահուկիր գլուխ խօնարհեց Ճահին և դուրս գնաց:

ԺԷ.

Մունետիկի ձայնը լսուեցաւ, նաև, այն թաղում ուր ապրում էին հայր Մատթէոս երազմոսը և պապի նուիրակ՝ հայր Պօղոս Զիտտապինին: Մունետիկի յայտարարութիւնը՝ Անդրէաս երէցի գլխատման մասին, արդարե, առաջին անգամ դող հանեց նրանց սիրտը: Գերապայծառ հայրերը խորհեցին ու զգացին իրրև կարեկից քրիստոնեաներ. բայց այդ՝ առ ժամանակ միայն: Որովհետև ըիշ յետոյ հայր Մատթէոսն աբաց.

—Մենք իսկապէս ցաւելու իրաւոնք էլ չունինք. ովի լաւ է այր մի մեռանիցի՝ ի վերայ ժողովրդեանս և մի ամենայն ազգս կորիցէ:

—Ընդհակառակը, պէտք է որ ցաւենք. որովհետև այդ երէցի մեռնելովն է որ ազգը կորչում է, նկատեց Զիտտապինին:

—Դու ուրեմն չհասկացար ինձ: Ես այս ազգի հո-

գեոր և ոչ թէ մարմնաւոր կորստեան մասին եմ խօսում։ 2է որ այս քահանան էր մեր գործունէութեան խոշնդուտը։ Բայց ահա նա այժմ բարձում է մէջ տեղից և գործելու ասպարէզը մնում է ազատ...»

—Եյդակէս էլ հասկացայ ես ուստի և նկատեցի թէ հենց այժմ է կորչում ազդը։

—Ի՞նչպէս. միթէ նա կկորչի, եթէ մեր փարախը մտնէ, հարցրեց Երազմոսը։

—Հենց այդ է ցաւը որ մեր փարախը չի մտնիլ։ Որովհետև եթէ այդ քահանան հայրենի հաւատի վրայ նահատակուի, նա այնուհետև հայոց համար կդառնայ մի պաշտելի սուրբ, մի աննման հերոս, որ իւր անձը զոհել է ժողովրդի փրկութեան։ Եւ, ահա, այնուհետև նրա խօսածներն ու բարոզածները կդառնան հայոց համար երկնային պատղամներ... դու այլ ևս չես կարող ազատ շրջել քո ժեմում կամ քարոզել հայ ժողովրդին՝ դառնալ քո փարախը, որից տէր-Ծնդիրէասը սովորեցրել է նրան հեռանալ։ Այդ քահանայի նահատակութիւնը հայ եկեղեցու յաղթանակն է։ պէտք է աշխատել արգելք լինել այդ բանին...»

Հայր Երազմոսը սկսաւ մտածել։ 2իտտադինիի դիտողութիւնը իրաւացի էր։ Պէտք էր ուրեմն աշխատել արգելման ճանապարհը գտնել։ Եւ ահա մի փոքր լուսութիւնից յետ նա ասաց։

—Եթէ այդպէս է, գերապայծառ հայր, քեզ վրայ ծանրանում է մի օրինական պարտք։ դու պիտի աշխատես կատարել այն փութով։

—Եյսինքն։

—Այս անգամ ևս դու պիտի հանդէս գաս սրբազն պապի փառաւորեալ անունով։ Պէտք է մի անգամ ևս ցոյց տաս հայ ժողովրդին տիեզերական քահանայի գորութիւնը։

— Ի՞նչ պիտի անեմ, հարցը քիտադինին՝ հայեցքը սեռուկով հայր Երազմոսի վրայ:

— Ճահին ներկայացել են բաղմաթիւ խնդրարկուներ՝ կալանաւոր քահանայի մասին բարեխօսելու, ներկայացել են հայոց մեծամեծները, առաջնորդն ու քահանաները. Ամիրդինէ խանը, շահի աւագանին և, մինչև անդամ, Ազուկեցւոց կանայքը. Բայց թագաւորը մերժել է ամենքին: Մնում է այժմ որ դու հանդէս դաս սրբազն պապի և Փրանդի ու Սպանիոյ թագաւորների կողմից, (որոնց օրինական նուիրակն ես դու), և խնդրես Շահաբասից տէր-Անդրէասի աղատութիւնը. Ճահը, հաւատացած եմ, մի հասարակ քահանայի պատճառով չի մերժիլ աշխարհի ամենազօր պետերի լիազօր նուիրակին: Դու կաղատես կախաղանից նրան, որին աղատել չկարողացան բոլորն հայերն ու պարսից աւագանին: Այդ յաղթանակը կրարձրացնէ հայ ժողովրդի աշրում երիցս երանեալ քահանայապետի անունը և նրա ծառաների, այն է նուաստներիս վարկն ու նշանակութիւնը:

Հայր Զիտադինին, որ ուշադրութեամբ լսում էր կարգապետին, բանաւոր գտաւ նրա առաջարկութիւնը:

— Արդարե, մեր միջամտելու ժամանակն է, ասաց նա. — շահը չի մերժիլ իմ խնդիրը, որովհետև նա ինքն է առիթներ որոնում բարեկամութեան ապացոյցներ ներկայացնելու սրբազն պապին: Մեր յաղթանակն ապահովուած է, զիտեմ. մենք կաղատենք քահանային. բայց այդ բարիքը թեթևապնի չի պիտի վաճառենք: Դու նախ պիտի տեսնուիս մեղապարափհետ և խօսք առնես նրանից՝ որ իւր աղատութիւնը ստանալուց յետ՝ նա ոչ միայն մեղդէմ գործելուց դադարէ, այլ և ինքն անձամբ մտնէ ոնմիթոռների կարգը և ծառայէ մեղ հաւատարմութեամբ: Այս պայմանով միայն ես կներկայանամ շահն և կաղատեմ այդ երէցին կախաղանից:

— Իսկ եթէ նա այդ առաջարկութիւնը չընդունէ:

— Ընկարելի է որ դիմադրէ: Նա այնքան շատ է տանջուել այս մի եօթնեակում, որ սրտանց կփափակէ աղատուի բանտից և, նա մանաւանդ, անարդ կախաղանից: Սշսարհից բաժանուիլը այնքան էլ հեշտ չէ, մանաւանդ, երիտասարդ մարդու համար, որ յոյսեր, ակնկալութիւններ ունի, որ կարող է կեանքի բարիքները վայելլել...

— Իցէ թէ այդ ամենը առ ոչինչ գրեց նա:

— Այն ժամանակ...

Հայր Զիտտադինին սկսաւ մտածել և չգիտէր ինչպէս որոշել: Մի քանի վայրկեան լուռ խորհելուց յետ՝ վերջապէս ասաց. — այսուամենայնիւ, մենք պէտք է ազատենք երէցին: Դա այնպիսի մի առիթէնէ, որից շշահութիլը կլինի անմտութիւն: Երէցին ազատելով մենք կկատարենք մի գործ, ձեռք կբերենք մի յաղթանակ, որով թէ սրբազն Պապի անունը կհոշակուի և թէ մեր վարկը հայոց աշջում կբարձրանայ: Այդ յաղթանակը կծառայէ մեզ, նաև, իրեն գէնք, որով մեր ամենից յամառ հակառակորդներն իսկ կընկճուեն:

— Եթէ այդպէս է, ուրեմն ես մի ժամից կայցելեմ տէր Անդրէին և հարկ եղածը կխօսեմ նրա հետ, ասաց հայր Երազմոսը:

— Այն, պիտի այցելես և խօսես լրջօրէն. պիտի աշխատես համոզել... իսկ ես կերթամ շահի դուռը՝ մեծամեծների հետ տեսնուելու: Ընշուշտ վաղ առաւօտ կներկայացնեն ինձ շահին, յարեց Զիտտադինին:

Քիչ ժամանակից յետ դուրս եկան տանից երկու հայրերը: Նրանցից մինը դէպի բանտն ուղղուեցաւ, իսկ միւսը՝ դէպի Դուռը:

ԺԹ.

Օրհասական առաւտուլ լուսացաւ: Երկինքը պարզ
էր և անամպ. Սրեք, որ ծագում էր Ալանդէօղի ետևից,
իւր պայծառ ճառագայթներով ողողել էր արդէն Ազու-
լիաց ձորի ձիւնապատ լանջերը և աւանի բոլոր բարձ-
րադիր բնակութիւնները։ Զորի խորքը միայն և Դաշտ
աւանը մասամբ՝ ծածկրւած էին զեռ մշուշով, որ վա-
ղորդեան շողերի առաջ դեղին՝ իսկ ստուերապատ վայ-
րերում կապօյտ գոյն առնելով՝ դարձել էր անթափան-
ցիկ. Ազուլիսում, սակայն, ամենքը ոտքի վրայ էին այդ
ժամանակ. Աւանի մէջ տիրում էր անսսովոր կենդանու-
թիւն. Փողոցները լցուել էին անցորդներով և մարդիկ
ու կանայք՝ ծերեր թէ երիտասարդներ, խումբ խումբ
ժողովուած դիմում էին դէպի բանտը։ Նրանցից ոմանք
գնում էին ծանրաբայլ, ուրիշներն՝ շտապով, բայց ա-
մենքն, առհասարակ, տխուր և յուսահատ. շատերն էլ
ցամկրտ դէմքով. որովհետեւ զնում էին՝ հայ եկեղեցուն
ու անուանը համնելիք անարգանքն իրենց աշքով տես-
նելու։

Բանտի առաջ տարածուող տափարակի վրայ կանգ-
նած էր բարձր կախաղան, որի վրայ տակաւին բանում
էին հիւմները, ըստ որում գործը նախընթաց երեկոյից
սկսելով՝ զեռ ևս չէին աւարտել. Մարգագները խարազ-
նով ցրւում էին ամբոխը, որ հետզհետէ ստուարանալով՝
խոնուում էր կախաղանի շուրջը և դէպի հիւմներն ուղ-
ղած լուտանքներով՝ արգեկը լինում նրանց Հաշխատու-
թեան։

— Անամօթներ, անիծեալներ, ում համար էք այդ
կախաղանը շինում։ ինչնւ էք պղծում ձեր արհեստը.
աւելի լաւ չէ որ այդ ուրաքներով ձեր գլուխը զարդէք՝
բան թէ դրանցով դեսրին ծառայէք։ Զգիտէք որ վար-

ձերնիդ դժոխքում պիտի ստանաք, որ աղդ ու ազգատոհմով գեհենը պիտի թափուիք...:

Այս և նման լուսանքներ շարունակ ամբոխը տեղում էր դէպի հայ հիւմները. իսկ վերջինները և՛ բանում և՛ արդարացնում էին իրենց.

— Այ բարի մարդիկ. այ բրիստոնեաներ. ինչու էր մեզ հայհայում. մենք հօ մեր կամքով չե՞նք եկել այստեղ. մեզ զօրով են զուրս հանել տանից և զօրով էլ քաշ տուել այստեղ. Աստուծոյ սիրուն համար՝ մի անիծէր մեզ, խեղճ բանուորն ի՞նչ անի ֆարրաշ-բաշու հրամանի դէմ. ամեն մէկիս մէջքերին մտրակի տասնեակ հարուածներ են իջել. մեր ցան արդէն բաւական է, գուք ինչու էր մեզ տանջում...:

Հնայելով այս միջանկեալ արգելքներին՝ այսուամենայնիւ, կախաղանի գործը վերջացաւ. Ճուտով եկան մի քանի խումբ զինուորներ, որոնք փայտակերտը շրջապատեցին, որպէսզի պատժի գործադրութեան ժամանակ՝ ամբոխի շարժման առաջն առնեն. Բայց վերջինը շարունակ ստուարանում էր և ընդարձակ տափարակը հետըդ-հետէ գրաւում. Ագուլիսն ու Դաշտը գրեթէ դատարկուել էին. ամեն ոք ցանկացել էր վերջին անգամ տեսնել անգույքական հովուին, կամ ներկայ լինել նրա հերոսական մահուան. Եւ այդտեղ խոնուել էին ոչ միայն հասարակ մարդիկ, այլև բոլոր նշանաւոր հայերն, իշխաններ, մելիքներ, դատաւորներ, ամբողջ հայ հոգեորականութիւնը, և, մինչև անգամ, կուսանոցի միանձնուհիք՝ շրջապատուած կանանց բազմաթիւ խումբերով:

Սյստեղ էին, նաև, տէր-Անդրէի ծնողներն և նրա երիասարդ ամուսինը. երեքն էլ վշտահար, ընկճուած և թալկադէմ. Նրանց շրջապատել էին Ագուլիսի ընտիր և անուանի ընտանիքները, որոնք և միսիթարում ու սիրտ էին տալիս նրանց. որովհետև պառան ու հարսը շա-

րունակ լալիս և կոծում էին իրենց, ծերունին միայն անխռով էր. Եւ թէպէտ նրա զառամեալ դէմքի վրայ ևս գլորում էին արցունքներ, սակայն, նա խրատում էր կը նոզն ու հարսին՝ բնաւ շինատուիլ և տրտունջ շայտնել:

—Մի լաք, ասում էր նա, այլ աղօթեցէք Սստծուն որ ոյժ տայ մեր որդուն՝ բաջութեամբ փորձութեան այս բաժակը ըմպելու. աղօթեցէք, որ նա արիացնէ Սնդրէին անտրտունջ նահատակուելու և մեր եկեղեցու անունը աշխարհի առաջ փառաւորելու։ Մեր որդին, այս, կարող էր այսուհետեւ յիսուն տարի ևս ապրել. բայց նա կմեռնէր առանց իւր համար պարծանաց մի յիշատակ թողնելու. մինչդեռ այսօր մահ ընդունելով՝ նա դառնում է մարտիրոս և դասում հայոց սուրբերի կարգը... միթէ սրանից աւելի մեծ միսիթարութիւն կարող է լինել մի ծնողի համար, որ ցանկանում է ունենալ բարեյիշատակ զաւակ....

Այս խօսքերն, արդարն, աղդեցութիւն արին պառակի և հարսի վրայ. նրանք լարուց դադարեցին։

Բայց յանկարծ բազուեցան բանափի դռները և երևաց դահիճների կարմրազդեստ խումբը, չոր իւր մէջ առած քերում էր երէցին։ Պառաւն ու հարսը նշմարեցին նըրանց. զարհուրեցնող պատկերը կանացի սրտերը խորտակեց. երկուան էլ միանուադ ճիշ արձակեցին և նուազելով ընկան շրջապատող կանանց ձեռքերի վրայ։

Այսուհետեւ ամեն կողմ տիրեց խուլ շշուկ. «քերում են» խօսքը հնչեց իբր թնդիւն և ժողովուրդը յուղուած՝ ծովի ալիքների պէս, հորդան տուաւ առաջ։

Բայց զինեալ վաշտերը անհոդ չէին այդ միջոցին. նրանք խոնուողներին յետ մղեցին խկոյն, որովհետեւ սկսան անխտիր հարուածել։ Խիզախողները, հարկաւ, յետ փախան տագնապով և կախաղանի հրապարակը մաքրուեցաւ ամբոխից։

Եւ ահա այդ ժամանակ դահիճները եկան, կանգնե-

ցին կախաղանի առաջ։ Դահճապետը տէր Անդրէասի թեւկով բռնելով՝ հանեց նրան փորբիկ հողակայտի վրայ, ամենքին տեսանելի կացուցանելու համար։

Բիւրաւոր աչքեր ուղղուցան այդ վայրկենին դէպի անձնուէր երէցը. բիւրաւոր սրտեր հառաջանք արձակեցին, տեսնելով նրան նիհար, թալկագէմ և դահճներով շրջապատ։ Բայց հոգու արիութիւնը չէր ընկճուած նրա մէջ և այդ ցոլանում էր իւր դէմքի վրայ. նա ողջունեց ժողովրդին քաղցր ժախտով և ուրախացաւ՝ լսելով նրա բերանից օրհնութեան մրմունչներ, որոնք ուղլուամ էին իւր սիրելի անուանը։

Հուտով առաջ եկաւ պատժարար վերակացուն, որ նստած էր աշխոյժ նժոյդի վրայ և հանելով ծոցից Շահի հրամանագիրը, քարձր ձայնով կարդաց։

Այդ հրամանագրի մէջ ժուռած էին երէցի այն յանցանքները, որոց հետ պատմութեանս ընթացքում ծանօթացակք. ապա որոշուած էր այն անարգ պատիժը, որ կըրում են այդ տեսակ յանցաւորները. Դրա հետ միասին յիշատակուած էր, նաև, շահի կողմից սպասուելիք ներումն ու վարձատրութիւնը, եթէ երէցը յանձն առնէր քրիստոնէութիւնը ժողնել և ի՞լնդունել մահմեղականութիւն։

Երբ հրամանագրի ընթերցումն աւարտուեց, առաջ եկաւ պարսիկ կրօնապետը, որ մինչ այն կանգնած էր մեկուսի և սկսաւ խօսել երէցի հետ։

—Քաշիշ. դու երիտասարդ ես ։ Ես դեռ կարող ես երկար ապրել։ Կեանքը ամենամեծ չնորհնէ, որ Աստուած տուել է մարդուն։ Ծնմիտ է նա, ով չէ կամմենում օգտուիլ այդ չնորհից։ Լսիր դու ինձ, քեզանից աւելի տարիքով և փորձուած ծերունուս. ընդունիր իմ խորհուրդը, որ քարի է և իմաստուն։ Այստեղ քեզ սպասում են երկու տեսակ վարձատրութիւն։ —մինը կախաղանն է, որին արժա.

նանում են գողերը, մարդասպանները և ամենից անարգ յանցագործները. միւսը՝ ալքայական ողբրմածութիւնը, որին պիտի հետևին փառք, պատիւ, հարստութիւն և եղանկութիւն. Առաջինը պիտի ընդունես, քրիստոնեայ մնալով. երկրորդին պիտի արժանանաս՝ խօսմը դաւանելով. Խելօր եղիր, ուրեմն, և խնայիր քեզ. պարզէ ձեռքդ դէպի այն վարձատրութիւնը, որ պատուաւոր է և որը պիտի տայ քեզ Մահմեդի սուրբ օրէնքը...:

— Ի զուր է յորդորդ, ով մարդ, ընդհատեց երէցը կրօնապետին. Եթէ մինչև այսօր կրածս տանջանքները չեն քաղցրացրել իմ աշքում կեանքն ու նիս բարիները, ապա կախաղանը չի պիտի անէ աւելին: Նա, ընդհակառակը, վերջ կտայ իմ տանջանքներին, որ յաւէտ ցանկալի է ինձ: Զեր կրօնը սովորեցնում է ձեզ՝ վայելել բարիներն այս անցաւոր աշխարհում, մերը սովորեցնում է՝ վայելել նոյնը այն կեանքում, ուր ամեն ինչ անանց, ամեն ինչ յաւիտենական է: Ես պիտի հետևեմ իմ կրօնի ուսման. որովհետև նա է բարին և ճշմարիտը: Միակ չնորհը, որ դու կարող ես անել, այդ այն է, որ խորհուրդ տաս բոլոր պարծանք եղող այս դահիճներին՝ վայրկեան առաջ կատարել իրենց վրայ դրուած պարտքը...:

— Ես մարդը չի գաղարում հայհոյելուց. հրամայիր կախել նրան, դարձաւ կրօնապետը վերակացուին:

Բայց վերջինս, որ ինսայում էր քահանային ոչ միայն նրա երիտասարդութեան և արտաքին գեղեցկութեան պատճառով, այլև նրա համար որ գաղտնի հրաման ունէր՝ ստիպել նրան ամեն կերպ՝ հաւատն ուրանալու, մօտեցաւ քահանային և սկսաւ յորդորել նրան՝ կատարել արքայի ցանկութիւնը:

— Ճա՞ն առանձնապէս պատուիրել է ինձ յայտնել քեզ՝ որ խոստացուած վարձատրութեան տասնապատիկը պիտի ստանաս, եթէ իւր ցանկութիւնը կատարես: Արի,

մի յամառիր, խնայիր քեզ. քո ծնողներին ու ամուսնուն և պաշտիր ընդհանուրի Աստուածը ոչ թէ քո, այլ մեր հաւատով։ Դրանով դու ոշինչ չես կորցնիլ, բայց կշահես կարի շատ....

Այս և նման խօսքերով նա երկար յորդորում էր երէցին. բայց տեսնելով որ սա անյօդդողդ է, դիմեց շըրջապատող հայերին.

— Եեր բոլորի մէջ չկայ այսպիսի մի տղամարդ. ինչու գոնէ դուք չէք խնայում նրան. ինչու չէք գալիս և չէք յորդորում որ թողնէ սա իւր մոլորութիւնը։ Միթէ պատուվի ապրելը գերազանց չէ անպատիւ մահից։

Թէպէտ վերակացուն Խօսում էր իրրե կենցաղասէր պարսիկ, այսուամենայնիւ, գտնուեցան և հայեր, որոնք նրա հրաւէրն ընդունեցին և մօտենալով քահանային՝ խորհուրդ տուին նրան՝ ուրանալ հաւատը, գոնէ, առ երես, որպէս զի աղատուի կախաղանից։

— Միթէ այդպէս չարին և հայ նախարարները, երբ Յազկերտը նրանց բանտարկեց Տիզրոնում, շնչաց երէցի ականջին գրագէտ մելիքներից մինը։

— Այս, մելիք, այդպէս արին հայոց նախարարները, պատասխանեց Տէր-Ասդրէն՝ տխուր ժպտալով. — սակայն նրանք մի ամբողջ հայրենիք ունէին աղատելու, ուստի և ուրացան։ Բայց իմ աղատելիքը մի թշուառ մարմին է, որն այսօր կայ և վաղը չի լինիլ։ Արծէ արդեօք որ ես դրա համար իմ հաւատն ուրանամ և, իբր չար օրինակ, կենդանի շրջեմ իմ ժողովրդի առաջ....

— Առ երես ասացի, տէր հայր, միայն առ երես. շնչաց մելիքը։

— Եւ ոչ իսկ առ երես. Միթէ չես յիշում Քրիստոսի պատուէրը. «որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ, որ յերկինսն է», ասաց նա իւր աշակերտաներին։

Մելիքը կախեց դղուխը և հեռացաւ։ Հեռացան նրա հետ և ուրիշները։

Վերակացում տեսնելով որ ոչ մի յորդոր չէ ազգում բահանայի վրայ, հրամայեց իջեցնել կախաղանի կարթերը և ապա երէցին փայտակերտ պատուանդանի վրայ հանելով կանչել տուաւ այդտեղ նրա ծնողներին և ասաց նրանց։

— Ահա միքանի՞վայրկեանից ձեր աշքով պիտի տեսնէք թէ՝ ինչպէս այս կարթերը խրւում են ձեր որդու փափուկ մարմնի մէջ։ Թէ ինչպէս այս օդակը սեղմում է նրա սպիտակ պարանոցը և մարմինը քաշելով տանում դէպի վեր և անշնչացնելով օրօրում օդի մէջ... պիտի տեսնէք թէ՝ ինչպէս արիւնը ժայթքում է նրա սիրուն բերանից և գեղեցիկ դէմքը այլակերպուելով՝ սարսուռ. է ազգում իւր վրայ նայողին...։ Խղճացէք ուրեմն ձեր որդուն. խրատեցէք նրան ձեր ծնողական իշխանութեամբ. գուցէ նա թունէ իւր յամառութիւնը։

Պառաւը, որ հազիւ էր ոտքի վրայ կանգնում. տեսնելով որդուն կախաղանի առաջ և շրջապատուած դահիճներով, որոնցից ոմանք սրերն էին չողացնում, ոմանք՝ կարթերն ու խեղդանը պատրաստում, չկարողացաւ այլ ևս ոտքի վրայ մնալ.—«Ընդդէ, սիրելի գաւակ, միթէ ես քեզ գրա համար ծնեցի...» մրմնջաց նա աղիողորմ ձայնով և թուլանալով ընկաւ գետնի վրայ։

Երէցը հրաման առնելով՝ իջաւ փայտակերտից և ծընկան գալով մօր առաջ՝ գիրկն առաւ նրան։

— Մի տիսրիր, մայր իմ, որ սրա համար ծնեցիր ինձ, ասաց նա արտասուագին. այլ ուրախացիր, որովհետեւ որդիդ մեռնում է՝ միայն ապրելու համար...։ Երբ ես քո առաջ կարդում էի Շամունէի պատմութիւնը, դու հիանում էիր նրա քաջութեամբ և երանում նրան այն պատճառով՝ որ իւր եօթ որդիներին յորդորեց նահատա-

կուիլ հայրենի հաւատոյ համար... ահա հասաւ ժամանակը, մայր իմ, որ դու նմանուիս ձամունէին... Օ՛ն, ուրեմն, քաջացիր և օրհնիր իմ ճանապարհը. թող հայ մայրերը օրինակ առնեն ըեզնից. թող ամենքը սովորեն սուրբ գործի համար զոհել...:

Երէցի խօսքերը աղդեցին մօր վրայ. նա գրկեց որդուն, սեղմեց կրծքին և լալով ասաց.

— Օրհնում եմ քո ճանապարհը, Անդրէ, գնա մեռիր... եթէ Սստուած մահ է սահմանել քեզ համար, ապա լաւ է որ մեռնես մեր սուրբ հաւատի համար. գնա, ես չեմ տխրում...:

Երէցը համբուրեց մօրը ջերմագին և խլուելով նրա գրկեց, դիմեց ծերունուն:

— Դու ես, հայր իմ, անշուշտ չես տխրում. ասաց և գրկախառնուեց:

— Տխրիլ, քաւ լիցի. ուրախութեան օր է այսօր, Անդրէ. միթէ հայրը կտիրէ իւր որդու անմահութեան համար... օրհնում եմ Աստծոն, որ արժանի արաւ ինձ քեզ հայր լինելու. օրհնում եմ այն օրը երբ դու ծնուցար. օրհնում եմ այն ժամը, երբ դու շունչ առիր: Դու այն, պատիւ բերիր քո հօրը և փառք՝ քո աղզին. թող օրհնեն քեզ, ուրեմն, բոլոր հայ բերանները. և նրանց օրհնութիւնը ամրացնէ քո սիրտը, արիացնէ հոգիդ՝ աներկիւդ մահուան առաջ դիմելու: Մի օր ծնուել ես, մի օր պիտի մեռնէիր. այս կախաղանը չի պիտի զարհուրեցնէ քեզ. դիմիր դէպի նրան քաջութեամբ և մեռիր անտըրտունչ. որպէս զի փառաւորես քո աղզի և եկեղեցւոյ անունը և դասակից լինիս այն սուրբերին, որոց պատմութիւնը յաճախ կարդում էիր մեր առաջ...:

— Անպիտան ծերուկ, դու դէպի բարին յորդորելու փոխարէն, հակառակն ես գործում. գուաց յանկարծ վերակացուն, որին հասկացրել էին ծերունու խօսածները,

և դառնալով դահճապետին՝ հրամայեց իսկոյն բաժանել հօրն ու որդուն, որոնք գրկախառնուած՝ հրաժեշտի համբոյր էին տալիս միմեանց:

Դահճապետը կատարեց վերակացուի հրամանը և երէցին նորից հանեց փայտակերտի վրայ:

— Այժմ արդէն պատրաստ եմ, արէք ինձ հետ ինչ որ հրամայուած է ձեզ. գոշեց երէցն հանդիսաբար և գոտին լուծելով սկսաւ մերկանալ.

— Մի վայրկեան ևս, և մահը կմօտենայ քեզ. խելօք եղիր և ապրիր... այս խօսքերով նորէն առաջացաւ կրօնապետը և սկսաւ յորդոր կարդալ երէցին:

Վերջինս չէր պատասխանում:

— Առ այժմ մեծ գործ չունիս կատարելու, շարունակեց կրօնապետը, — բարձր ձայնով ասա. « Ղարդարական իւլ ալահ, Մուհամմէդ ուսուլ ալահ...»¹⁾ և ամեն ինչ կվերջանայ:

Երէցը լուռ էր:

— Կրկնիր այս խօսքը երեք անգամ, բայց կրկնիր անկեղծօրէն և դու կապրես, պնդեց կրօնապետը:

Երէցը դարձուց երեսը կրօնապետից և ձեռքերը երկինք ամրառնալով սկսաւ բարձրաձայն սուրբ հանդանակը կարդալ. — «Հաւատամբ ի մի Աստուած, արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից...»:

Հազարաւոր ժողովուրդը իւր միաւորած ձեռքերն ամբառնալով սկսաւ երէցի հետ նոյն «Հաւատամբը» մըրմնջալ:

Երբ կրօնապետն իմացաւ որ բահանան իւր եկեղեցւոյ դաւանութիւնն է կարդում, բարկացած գոշեց.

— Աղա վէրիլ. այս մարդը փէյգամբարին ու նրա

¹⁾ Հայոց Աստուած բացի Աստծուց, և Մուհամմէդը նրա մարգարէն է:

քարողած կրօնն է հայհոյում, ինչու չես հրամայում լոեցնել սրան:

Վերակացուի ակնարկելով՝ դահճապետը վազեց գէպի քահանան և սուրբ շողացնելով՝ նրա գլխին՝ գոչեց.

— Լոիր, թշուառական, ապա թէ ոչ գլուխդ թրոցնում եմ իսկոյն:

Դահճապետի սրի հետ միասին մի քանիցուրիշ սրեր ևս շողացին քահանայի շուրջը՝ բայց նա անքթիթ և բարձրաբար շարունակում էր «հանգանակը»:

Եւ որովհետև հրամայուած էր կախել երէցին, . ուստի ոչ ոք սրի հարուած չտուաւ նրան. սրերը շողացնում էին միայն վախեցնելու համար: Բայց երէցն անյողգողդ էր:

— Մօտեցրէք կարթերը և խրեցէք դրա կողերի մէջ. իշխեցրէք խեղպանը և պարանոցն անցցրէք. թող այս յամառ քրիստոնեան իւր աղօթքի միւս կէսը կարդայ օդի մէջ... հրամայեց վերջապէս վերակացուն և դահիճները դժոխային եռանդով գործի դիմեցին:

Բայց ահա, հենց այդ վայրկենին, երևաց հեծեալների մի խումբ, որ սպիտակ դրօշը ծածանելով՝ արշաւասոյր դէպի պատժարանն էր դիմում:

Երբ այդ մասին յայտնեցին վերակացուին, նա հրամայեց դահճապետին սպասել մի վայրկեան, որովհետեւ իմացաւ որ եկողները շահի կողմիցն են:

Երբ հեծեալները մօտեցան հրապարակին, դրօշակիրը բարձր ձայնով գոչեց.

— «Կըրլէյը-Ալէմից ներումն յանցաւորին».

Այս խօսքերը դաշտի մէջ հնչեցին իբրև աւետաբեր հրեշտակի ձայն. հրճուանքն ու ցնծութիւնը տիրեց բոլորին և ժողովուրդը ոգեսրուած աղաղակեց. — Ապրի թագաւորը. ապրի Շահնշահը....»

Բայց երէցի դէմքը, որ մինչև այն ժպտուն էր և

պայծառ, յանկարծ մոայլուեցաւ. ներման լուրը, կարծես թէ, հարուտծ տուաւ նրան: Եւ ոչ ոք չգիտէր թէ ինչու տխրեց նա:

Սակայն պատճառը կարի մեծակշիռ էր: Նա տեսաւ որ հեծեալներին առաջնորդում են հայր Երաղմոսը և հայր Զիտտադինին: Նա գուշակեց որ արքայական ներումը ստացուել է նրանց չնորհիւ, ուստի և տխրեց, ինչպէս քաջամարտիկ մի յաղթական, որի ձեռքից յանկարծ խըլում են յաղթութեան շքաղիք դափնին....:

Դրօշակիրը առաջ գալով ներման հրովարտակը յանձնեց զերակացուին: Վերջինս համբուլբով այն՝ բացաւ և սկսեց կարդալ.

«Բարձրեալ է Սստուած, Որին պատկանում է երկ- « նային թագաւորութիւնը և Որի հզօր աջը հովանի « է անմահների մէջ բնակող իմ արդար հօր Խու- « դավինդիի վրայ:

« Ես Մեծ և հզօր Արաս, թագաւոր Իրանի և Փար- « սիստանի, Արքայ Էրմէնիստանի և Գուրջիստանի. « Տէր և հրամայող բոլոր այն երկիրների, որոնք Սո- « տուծոյ Ամենակարող օգնութեամբ պիտի խոնարհին « իմ սուրի առաջ.

« յայտնում եմ

« իմ սիրելի հպատակներին՝

« որ զիջանելով խալիֆաների խալիֆ և կաթուղիկոսների « կաթուղիկոս՝ մեծ և բարձրապատիւ չուլվմայ Պապի, « այլ և Փրանգի և Սպանիայ հզօր թագաւորների արժա- « նայարգ վէքիլ խալիֆ. Պօղոս Մարիա-Զիտտադինիի խըն- « դիրքին և աղաշանքին, ներում եմ Անդրէաս կոչուած « հայ բաշիշի գործած մեծ յանցանքը և, 'ի չնորհս իմ « հօր, անմահ Խուղավինդիի, ազատում եմ նրան կա- « խաղանից. հրամայելով որ այսուհետև նա լինի հնա- « գանդ արժանայարգ վէքիլ խալիֆ Պօղոսին և նրա ըն-

« Կեր՝ պատուարժան խալիք Մատթէոս կարգապետին,
« այլ և լինի նրանց խրատների լսող ու կատարող. ո-
« բովհետև իմ առաջ այդ երկու խալիքաները երաշխա-
« ւոր են կանգնել իւր համար»:

« Գրուեցաւ Ագուիսում, իմ թագաւորութեան 31-րդ
« տարում, Զէմադի-իւլ-էվալ ամսոյ 20-ին Հիջրի 1034
թուին»:

Հրամանի վրայ դրօշմուած էր արքայական կնիքը:
Երբ վերակացուն ընթերցումն աւարտեց, պարզեց
հրովարտակը տէր Անդրէասին՝ համբուրելու համար:
Երէցն առաւ այն և առանց փայտակերտից իջնե-
լու՝ հրաման խնդրեց վերակացուից մի քանի խօսք
ասելու:

Վերջինս կարծելով թէ՛ երէցը կամենում է իւր չնոր-
հակալիքը յայտնել մարդասէր ձահին, իրաւունք տուաւ
նրան խօսելու:

— Փողովուրդ հայոց. գոչեց նա բարձրաձայն. — ան-
շուշտ ուրախացաք որ Արեգակնախայլ ձահը ներեց ինձ
իմ յանցանքը. և այդ՝ չնորհիւ «խալիքների խալիք և
կաթուղիկոսների կաթուղիկոս» Հռովմայ պապի նուիրակ
Զիտտադինիի: Անշուշտ ձեզանից իւրաքանչիւրը չնոր-
հակալ եղաւ իւր սրտում գերապատիւ հօրը իւր մարդա-
սէր արարքի համար:

«Այժմ ինձ լսեցէք:

«Երէկ երեկոյ այցելեց ինձ բանտում ունիթուների
կարգապետ հայր Մատթէոս Երազմոսը և առաջարկեց
ինձ թողնել իմ հարազատ հայադաւան եկեղեցին և մըտ.
նել ունիթուների կարգը, ընդունել կաթուղիկութիւն,
հպատակել պապին և նրա նուիրակ եպիսկոպոսի միջ-
նորդութեամբ ստանալ իմ ազատութիւնը:

«Ուրեմն, նա ինձ առաջարկում էր այն, ինչ որ ին-
քը, մեծափառ շահը Մինը պահանջում էր՝ թողնել քրիս-

տոնէութիւնը և լինել մահմեղական. միւսը առաջարկում էր՝ թողնել հայութիւնը և և լինել կաթոլիկ... Արդեօք այս երկու առաջարկներն էլ միևնոյն կշիռը չունին, երկուսն էլ միաժամանակ չէին պահանջում որ ես դաւաճանեմ իմ ազգին, իմ հայրենական եկեղեցնն. Հարկաւ այդպէս է: Ուստի ես բացէ ի բաց մերժեցի հայր Նրազմոսին և նախատեցի նրան՝ իւր անարդ առաջարկի համար: Բայց ահա. ինչպէս տեսնում էք, պապի իմաստուն ծառաները չեն գոհացել իմ մերժմամբ. նրանք խնդրել ե սատացել են շահից իմ աղատութեան հրամանը, որպէս զի կարողանան ձեզ ասել թէ՛ «տեսէք, հայեր, որքան հզօր և կարող է պապը, որքան մեծ ու անսահման է նրա իրաւունքը. — այն մահապարտը, որին ազտել չկարողացին բոլոր հայերը ու պարսից աւագանին, աղատեց մի Զիտադինի, լոկ հուվմայ պապի անունով... Եկէք, ուրեմն, հայեր, խոնարհեցէք այդ զօրութեան առաջ, թողեցէք ձեր ազգութիւնը, ձեր եկեղեցին, ձեր լոյս հաւատը, սուրբ Էջմիածինը և դարձէք ծառայ հուվմայ գահին...»: Օ՞ն և օ՞ն հայոց ժողովուրդ. մի ուրախանաք այս նենգամիտ շնորհով, որն այսօր մի հոգի փրկելով՝ վաղը հարիւրը պիտի կորցնէ. այսօր մի տէր-Անդրէաս ապրեցնելով՝ վաղը նման տասին պիտի մեռցնէ, — չեմ ասում սրով, այլ հոգով ու սրտով... Մի ընդունելով ուրեմն այս շնորհը. մի գոհանաք այս մարդկանց ձեզ արած ծառայութեամբ, զի «հաց անօրինին կոպճով լիու զբերան»: Զոհեր տուէք աներկիւդ, եթէ այդ պահանջում է ձեր եկեղեցւոյ աղատութիւնը. թողէք որ տէր-Անդրէասները մեռնին, եթէ անհրաժեշտ է որ նրանց ժողովուրդը ապրի: Եթէ մեր հոյակապնախարարները, աշխարհային գանձերով ճռխացած իշխանները զոհում էին իրանց անձը եկեղեցւոյ և ժողովրդի փրկութեան համար, ապա նվ է տէր-Անդրէասը, որ փախուստ տայ այդ պարտրից...»:

Եթէ հայոց եկեղեցին խաչւում է ամեն օր. Եթէ հայոց կաթուղիկոսը կապուած է շղթաներով, ինչու նրա սպասաւորը ազատ պիտի չբջի. Աստուծոյ լոյմն ու արևը ազատ վայելէ...։ Այս, ես կմեռնեմ. և իմ մահը թողանէծք լինի այն հայի համար, որ իւր ազգն ու եկեղեցին դաւաճանելու գնով կցանկանայ ապրել...։

«Իսկ դուք, նով պատուելի հարը, տէր-Մատթէոս երազմոս և տէր Պօղոս Մարիա-Զիտտադինի, որ առաքուած էք այստեղ հայոց եկեղեցին քանդելու և նրա տերակների վրայ հոռվմայ դրօշը բարձրացնելու, գիտացէք՝ որ ոչ միայն անարդ դործ էք կատարում, այլ և վաստակում էք ի գուրք. Զի հայոց եկեղեցին գորաւոր է և նա իւր հիմքը փորող բազուկները կցախջախէ. նա զօրաւոր է ոչ թէ աշխարհակալ արքաների պաշտպանութեամբ, այլ իւր անձնուէր որդւոց նահատակութեամբ. և նա չի ընկնուիլ, չի յաղթահարուիլ, թէկուզ հոռվմայ պապը և ֆուանգի թագաւորները՝ քրիստոնէութեան թըշնամի Զահաբասի հետ միացած աշխատեն նրան կործանելու համար. Կգայ ժամանակ, երբ մեր այս Միւնիքում, ուր դուք այսօր հաստատուել և ամեն մի կողմ ցանցեր էք սփուել, ձեր հետքն անգամ չի երեալ, և հայոց հայրենական եկեղեցին կլինի միակ հովանաւորողը իւր հարազատ զաւակների։

«Օ՞ն, ուրեմն, յետ վերցրէք ձեր բերած հրովարտակը. դժպհի են ինձ ձեր շնորհն ու բարիքը. խարդախեալ փրկութիւնից աւելի՛ ես մահն եմ գերադասում...։

Այս ասելով երէցը պատառուեց արքայական հրամանագիրը և պատառները ցրուեց օդի մէջ։

Մի յանկարծական աղաղակ բրդեց չորս կողմը. Հայերը սարսափեցան, պարսիկները կատաղեցին և կրօնաւորներն սկսան հայհոյանք տեղալ մեղապարտի վրայ։

Դահճապեալ, որ մինչ այն անուշադիր էք դէպի ե-

բէցի խօսածները, որովհետև հայերէն չէր հասկանում, տեսնելով հրովարտակի պատառոտիլը, հանեց իսկոյն դաշոյնը և խոյացաւ քահանայի վրայ.

— Այդ ի՞նչ յանդգնութիւն է, գարշելի արարած, գոչեց նա զայրագին և դաշոյնը թափով երէցի փորը խրեց:

Քահանայի աղիքը դուրս թափեցան իսկոյն, երէցը, որ տակաւին կանդնած էր անյողդողդ, սկսաւ ձախ ձեռքով արիւնաշաղախ լնտերքը ժողովել փորի մէջ, իսկ աջով խաշակնքել երեռը և աղօթել:

Դահիճներն անընդհատ հարուածներ էին տալիս խաշակնքող ձեռքին և աղօթող բերանին. բայց նա անշարժ էր: Թուում էր թէ մարմինը, որի վրայ հարուածներ էին տեղում, այլ ևս իրենը չէր, թէ հոգին անդդայ էր մարմնոյ տանջանքներին:

Վերջապէս մօտեցաւ պատժարար վերակացուն և հրամայեց կախաղան հանել նրան:

— Այն, կախեցէք, բայցոչ իբրև հասարակ յանցաւորի. այլ իբրև մնծ ոճրագործի. կախեցէք գլխիվայր, որպէս զի տանջանքը ժամերով տնի. հրամայեց նա:

Դահիճներն իսկոյն գետին գլորեցին երէցին և սրերով պատառեցին նրա սրունքների ջիղերը, ապա երկաթէ կարթերը նրանց մէջ անցցնելով քաշեցին դէպի կախաղանը:

Այսպիսով թշուառ զոհը գլխիվայր կախուած՝ ճօնում էր օդի մէջ. իսկ փորոտիքը թափուելով ծածկել էին կուրծքը, որով նա նմանւում էր սպանդանոցում կախուած մորթազերծ ոչխարի. միայն այն զանազանութեամբ՝ որ վերջինս անշնչացած լինելով՝ չէր զգալ իւր ցաւերը, մինչդեռ կախուած երէցը հեծում էր սոսկալի տանջանքների ներքոյ. եւ նրա հեծութեան ձայնակցում էր ժողովուրդը լալագին հառաչելով: Այն իսկ պատճռով վերակացուն հրամայեց ցրել ամբոխը, որպէս զի

գրգռում շառաջանայ: Զինեալ վաշտերը կատարեցին տը-
ւած հրամանը: Իսկ զրահաւորների մի ուրիշ խումբ
կախաղանը շրջապատեց՝ երէցի մահուան սպասելով:

Մակայն այդ մահը շուտ չհասաւ: Արի նահատակը
ծանր ու սոսկալի տանջանքներ կրեց. բայց կրեց ան-
տրունչ և իւր հեծութեանց մէջ անգամ Աստուծոյ ա-
նունն օրհնելով:

Արեք մայր մտնելու մօտ նա իւր արդար հոգին ա-
ւանդեց:

Երբ զահն այս բոլոր եղելութիւնն լիմացաւ, կատա-
դեց ինչպէս վիրաւոր գազան և իւր հրովարտակի անար-
գանաց վրէժը հրամայեց առնել նահատակի դիակից:

— Գցեցէք նրան շինութիւններից դուրս, բաց դաշտի
վրայ. ոչ որ թող չամարձակի ամփոփել այդ դիակը.
մինչև որ շներն ու գիշերային գաղանները չցրուեն նը-
րան ամբողջապէս, հրամայեց շահը և այդ հրամանը
կատարուեցաւ իսկոյն.

Նահատակի մարմինը վերդնելով կախաղանից՝ ձգե-
ցին հեռու, ամայի դաշտը:

Բայց հայերն անմիջապէս պահապաններ կարգեցին,
որպէսզի նրանք գիշեր ու ցերէկ հսկն դիակի վրայ, մին-
չև որ մեծամեծները յաջողեն հրաման առնել շահից սուր-
բի մարմինն ամփոփելու համար:

ի.

Անցաւ հինգ օր և սակայն նահատակի դին դեռ
անթաղ ընկած էր ամայի դաշտի վրայ: Հայերի խնդիրն
և աղաչանքը մնում էր անուշաղիր. Ժողովուրդը հետ-
ըզնեաէ յուգուում, գրգռուում էր: Մելիքները դիմեցին Ա-
միր դիւնէին և խնդրեցին նրան՝ զգուշացնել շահին, որ
լուսած ու.

պատճառ չզառնայ անտեղի յուզմանց, զուցէ և կոտորածի, որովհետև ժողովուրդը սաստիկ սրտմտած էր իրեն հասած անսարգանքի համար և կարող էր հեշտութեամբ անխոհեմ քայլեր անել:

Բայց շահը ոչ միայն անուշաղիր թողեց խանի խնդիրը այլ և հայերին աւելի կակծեցուցանելու համար հրամայեց Շահուուկսին հարեմ բերել տէր-Շնդրէասի կնոջը:

—Թող տեսնենք այժմ թէ աղուէսների զայրոյթը ինչ վնաս կարող է տալ ահաւոր վագրին, որ իւր բաղդը յագեցնելու համար՝ աւերում է նրանց խաղաղ ընտանիքը, ասաց շահը ծիծաղելով։

Բայց Շահուուկսն, որ աւելի հեռատես էր, այլ և, ծանօթ հայերի գրգռուած դրութեան, յարմար չպատա անձամբ դիմել քահանայի տոմը, կամ այնտեղ ուղարկել իւր մարդկանցից մէկին, որովհետև հաւատացած էր, որ այդ նպատակաւ Խցածորի թաղը մտնող պարսիկը կենդանի չէր մնալ. զինու զօրութեամբ տիրուհում դուրս հանեն էլ անխոհեմութիւն էր համարում։ Այդ պատճառով նա որոնեց և գտաւ մի պառաւ թրբուհի, որ մեծ հմտութիւն ունէր երիտասարդուհիներ կախարդելու և յայտնելով նրան շահի ցանկութիւնը պատուիրեց զնալ քահանայի կնոջ մօտ և ամեն հնար գործ դնել համողելու նրան՝ գալ շահի կոչին։

Պառաւը, որ յօյս ունէր մեծ պարզներ ստանալու, յանձն առաւ գործը ուղախութեամբ։ և դիմեց քահանայի տունը։

Նորատի այրիին նա գտաւ միայնակ, ուստի և ըսկըսաւ խօսել հետը անմիջապէս, բայց ճարտար զգուշութեամբ։

Ամենից առաջ նա ցաւ յայտնեց տիրուհուն՝ նրան հասած դժբաղտութեան համար. ապա միսիթարական

շատ խօսրեր խօսեց և վերջը, երբ այրին գտաւ բաւական ամոքուած, յայտնեց իւր գալստեան հրարի նպատակը:

Մանկամարդ տիրուհին, որ դեռ երէցի բանտարկութեան օրերում շափազանց շատ լացել էր սիրած ամուսնու համար և իւր վիճակը դառնապէս ողբացել, քահանայի նահատակութիւնից յետ՝ գտնուաւմ էր մի անքնական դրութեան մէջ: Նա, կարծես, այլ ևս չէր զգում իւր ցաւը. չէր լալիս առաջուան պէս. արտասուրի աղբիւրները ցամաքել էին նրա աշքերում և ներքին գոհունակութեան մի զգացում պայծառացրել էր զէմքը: Նա այլ ևս չէր մասնակցում սկէսուրի կամ սկերպայրի ողբերին և չէր ընկերակցում նրանց, երբ վերջիններս լալով դիմում էին իշխաններին՝ սիրեցեալ որդու մարմինը ամփոփելու հրաման հայցելու. Վարդիթերը զբաղուած էր մի ուրիշ և, իւր կարծիքով, աւելի մեծ գործով.... Թագաւորի անօրէն բռնութիւնը, ազգին ու եկեղեցուն հասած անարգանքը և այդ ամենի առաջ անմոռունջ խռնարհող հայերի փոքրոգութիւնը յանդուդն միտք էր ծնեցրել մանկամարդ կնոջ մէջ. — Նա մտածում էր վրէժինդիր լինել իւր շուրջը կատարուող բռնութեանց համար....

Բայց միթէ կարող էր: 2Է որ դա մի երազ, նեարդների զրգուումից առաջացած մի ցնորք էր: Ո՞վ էր կինը. Ենչ կարող էր անել նա...: Միթէ բռնութեան այդ օրերում, երբ ամենից զօրաւոր բազուկները մնացել էին անշարժ, մի թոյլ էակ պիտի յանդգնէր վրէժինդիրութեան համար մտածել: Հարկաւ, ոչ: Բայց և այնպէս, Վարդիթեր տիրուհին զբաղուած էր այդ մտածութեամբ:

Այն օրից սկսած որ նա երազում տեսել էր թէ՛ Շահուուխ բէկը իւր գլխի զարդը պսկելով փախչում է նա միշտ երկիւղի ու վարանման մէջ էր լինում, որովհետև գուշակում էր՝ որ այդ մարդն, անշուշտ, մի շարիք

պիտի բերէ իւր գլխին։ Եւ ահա, երբ այդ գուշակութիւնը իրականացաւ, ծանրագոյն վշտերի հետ միասին՝ ծընունդ առաւ նրա սրտում և այս տարօրինակ, կնոջ հոգուն անընտել զգացումը, որն և հետզհետէ նրա ամբողջ էութիւնը դրաւեց ։ Մանաւանդ երբ իմացաւ իժէ շահը հրամայել է անթաղ թողնել նահատակին, թէ նա մերժում է ամեն միջնորդութիւն, էլ տկար հոգին ապստամբեցաւ բռնութեան դէմ։ Կնոջ քիչ մտածող գլուխը և շատ զդացող սիրտը համաձայնութեան եկան՝ կատարելու մի գործ, որին չէին ժտում ձեռնարկել առնական խոհուն գլուխները։ հեռատեսութեամբ չափելով իրենց տրկարութիւնը և հակառակորդի զօրութիւնը և, հետևապէս խնայելով այն զոհերը, որ պիտի տային՝ իրենց անխորհուրդ ձեռնարկովթեամբ։

Բայց մանկամարդ տիրուհին ինչ ունէր կորցնելու։ 2Է՞ որ իւր միակ հարստութիւնը, միակ երջանկութիւնը իւր փառքն ու պարծանքը առել, տարել էին և նա այժմ նստած էր իւր տան աւերակների վրայ... աւելի լաւ չէ՞ր թողնել աշխարհը և գնալ իւր սիրած հոգու ետեւից։ Եւ նա, այս, որոշել էր մեռնել։ Նա չէր կեղծել շահի առաջ ասելով թէ՛ Փիմ ամուսնու մահից յետ ես չի պիտի կարենամ ապրել։

Բայց նա ուզում էր նախ հերոսանալ և ապա թէ մեռնել։ Նա կամենում էր նախ սատակել այն հրէշին, որ իւր տոմը կործանեց և ապա թէ բռնել այն ճանապարհը, որ տանում էր սիրելու մօտ...։

Եյո իսկ պատճառով երբ պառաւ թրքուհին զառուխից բերած նորութիւնը յայտնեց, մանկամարդ այրին իւր սրտում ուրախացաւ. որովհետև նրա առաջարկութիւնը շահաւոր գտաւ իւր նպատակի համար։ Բայց նա սկզբում կեղծեց, իբր թէ, չէ կարող շահի «երջանկաց» նողա առաջարկն ընդունել՝ իւր վշտի մեծութեան և վեր-

քերի տակաւին նոր լինելու պատճառով։ Եւ երբ պառա-
վը իւր բաղցը զբոյցներով սկսաւ համոզել նրան թէ՛
արքայական առատ շնորհները շուտ կմուացնեն իրեն
խր վշտերը, թէ պէտքէ փութալ օգուտ քաղել շահի բա-
րեհած տրամադրութիւնից, ապա թէ ոչ՝ ընդդիմութիւնը
ոչ միայն նրան բարիքներից կզրկէ, այլ և, կարող է չա-
րիքներ հասցնել. տիրուհին ասաց.

— Զկայ ինձ համար աւելի մեծ բաղտաւրութիւն,
քան մեծափառ շահնշահի շնորհին արժանանալը։ Բայց ես՝ չեմ
կարող ելնել այստեղից քո ընկերակցութեամբ, որովհետեւ
աղքակիցներս կքարկոծեն ինձ։ Ես կգամ Շահութիւնիկի
մօտ միայնակ, սակայն ոչ իմ հագուստով, այլ ծպտեալ։
Այդ պատճառով իննդրում եմ յայտնել իմ կողմից բէկին,
որ նա ինձ համար պատրաստել տայ մի ձեռք զինուու-
րական հագուստ և ուղարկէ այն քո ձեռքով։ Այդ շորի
մէջ ոչ ոք չի ճանաչիլ ինձ, (մանաւանդ որ հայերը հե-
ռու են պտտում զինուորներից) ուստի և ապահովապէս
կմտնեմ ես բէկի մօտ։ Այնուհետև թող նա ինքը ներ-
կայացնէ ինձ շահին ինչ ձեռվ որ կկամենայ։

Ցիրուհին պառաւին աւելի յիմարացնելու համար՝
իննդրեց որ նա անձամբ իւր շափը վերցնէ, որպէս զի
պատրաստուելիք հագուստը մեծ չգայ վրան և չմատնէ
իրեն։ Բացի այդ, նա պատուիրեց իննդրել Շահութիւն
որ իւր գալու ժամանակ հեռացնէ տան բակից բոլոր
զինուորներին, որպէս զի վերջիններս իւր ներս գալը
չնկատեն։

Երբ կնոջ հոգեկան աշխարհը մի գօրեղ ցնցումից
ենթարկում է յեղաշրջման, (բարւոյ առթիւ լինի այն
թէ չարի), այլ ևս նախկին ունակութիւնները դադարում
են նրա սրտի վրայ իշխելուց նոր զգացումներին ա-
ռաջնորդում է նոր աշխարհահայեացք և նա հանդիսա
խղճով գործում է այն՝ ինչ որ բուռն զգացմունքները

թելադրում են իրեն։ Այդ դէպքում յաճախ նա ոտք է կոխում ոչ միայն համեստութեան, այլ և, առաջինութեան վրայ. կամ, ընդհակառակի եթէ, մոլի է, կարդ եռանդով փարում է առաջինութեան, եթէ երկշոտ է, արիութիւն է զգենում և այդ բոլոր դէպքերումն էլ խիզճը մնում է խաղաղ, որովհետեւ զգացումները շրջնջում են նրա ականջին թէ՝ այժմ է նա միայն «լաւագոյնը» գործում։

Ահա այս օրինակ հոգեկան յեղաշրջման պէտք էր վերագրել և մանկամարդ այրիի վարմունքը։

Երբ պառաւը աւետեց Շահուուխին Վարդիթեր «հանըմի» համաձայնութիւնը, բէկն ուրախացաւ և յիշեց իսկոյն շահի կանանց մասին յայտնած կարծիքը։ — «Իմ տէրը չի սխալում, շնչաց նա ինքն իրեն, կնոջն, արդարե, կարելի է հրապուրել նոյն խիլ, իւր ամուսնուն դադաղի առաջ...»։

Եւ բէկն իսկոյն գերձակ կանչել տալով հրաժայեց որ մի աւուր մէջ խնդրուած հազուստը պատրաստեն։

Հետեւեալ առաւօտ պառաւը տիրուհուն յանձնեց մի կապոց, որի մէջ գտնում էին թէ՝ պատրաստուած շորերն, որոնք շահի թիկնապահների տարագն ունեին, և թէ՝ արծաթեայ մի կամար, զգեղեցիկ լաշոյն և մի թեթև կաճեայ, որով նորատի զինուորականը պիտի ծածկուէր։

Այս ամենը տեսնելով տիրուհին հրճուեցաւ. նա, մինչև անգամ, մոռացաւ իւր վիշտը ընդունելով թէ՝ վրէժն արդէն լուծուած. է։

Այնուհետև նա սկսաւ իւր կատարելիք գործի համար պատրաստուիլ. Եւ թէպէտ իւր կեանքում սուր չէր առել ձեռը և չգիտէր իսկ թէ՝ ինչպէս պէտքէ հարուածել՝ մահ պատճառելու համար. այսուամենայնիւ համոզուած էր թէ պիտի սպանէ Շահուուխին, որին իւր դժբաղտութեան միակ պատճառն էր համարում։

Բայց որպէս զի իւր հարուածի մէջ չվրիպէ, նա կանչեց իւր մօտ ծերունի ժամահարին, (որ եկեղեցու բարձինը սրբելուց յետ՝ պատրաստում էր մտնել իւր խուցը), որպէս զի նրանից մի քանի բան սովորէ: Երբունուն, 'ի հարկէ, նա չի պիտի յայտնէր գաղտնիքը. բայց կարող էր նրան խօսեցնելով իւր նպատակին հասնել:

— Արի, մահտեսի, տաքացիր, ձեռներդ սառած կլլինին. յետոյ բան պիտի հարցնեմ. ասաց տիրուհին, երբ ծերուկը մտաւ նրա մօտ:

— Այս, շատ աշխատեցայ. մեծ ձիւն կար բակում. մինչև որ հաւաքեցի, ձեռքերս փետացան... բայց ի՞նչ ժամանակ է իմ տաքանալու մասին խօսել. քո վիշտն այնքան մեծ է, տիրակին, որ ես զարմանում եմ թէ ի՞նչ պէս ես կարողանում ուշադրութիւն դարձնել ի՞նձ վրայ....

— Այս, մահտեսի, շատ է մեծ. և հենց բոլոր օրը դրա վրայ եմ մտածում: Բայց մի հանգամանք մտատանգութիւն է պատճառում ինձ. նրա համար եմ քեզ կանչել....

— Ի՞նչ հանգամանք. հարցրեց ծերուկը հետաքըրբ-բրութեամբ:

— Ասում են որ լուսահոգին մի քանի ժամ շարունակ կենդանի է մնացել կախաղանի վրայ. ի՞նչ է դրա պատճառը. չէ որ դահճապետը պատառած է եղել նրա փորը, ինչու նա իսկոյն չէ հոգին աւանդել....

— Ինչու համար ես այդ հարցնում:

— Կամենում եմ պատճառն իմանալ. այդ բանը անհանգստացնում է ինձ:

— Դու երևի կասկածում ես նահատակի արդար լինելու մասին, բացականչեց ծերուկը յուզուելով:

— Քան լիցի... բայց, ուզում եմ իմանալ. բացատրիր ինձ պատճառը, աղաչում եմ:

— Միշտ այդպէս է լինում, երբ պատառում են փո-

րի թաղանթը. բայց թէ դաշոյնը հասած լինէր լեարդին...

— Խսկոյն կմեռնէր այնպէս չէ.

— Այն., խսկ թէ հարուածը ուղղէին սրտին...

— Ի՞նչ կլինէր այն ժամանակ:

— Այն, երանի՞ թէ այդպէս էլ անէին... յարեց ծերուկը և ձեռքով աշքի արտասուրը սրբեց:

— Բայց ի՞նչ կլինէր այն ժամանակ. կրկնեց տիրուհին իւր հարցը.

— Մահն խսկոյն կհառնէր և խեղճը չէր տանջուիլ.

— Ի՞նչպէս. նրտեղ է լինում սիրտը, հարցրեց տիրուհին հետաքրքրութեամբ:

— Այստեղ. ձախ ծծի տակ. ցոյց տուաւ ծերունին. — բաւական է որ դաշոյնը հինգ մատնաշափ խրուփ այստեղ, և մարդ խսկոյն կանչնչանայ:

— Խսկման:

— Այն. մինչև անգամ ձայն արձակել չի կարող:

Տիրուհին հասել էր նպատակին: Նա շուտով զրոյցը վերջաւորեց: Եւ երբ ծերունին մարմինը տաքացնելով դուրս գնաց սենեակից, ինքը սկսաւ հագնուիլ:

Մի քանի ժամից յետ ս. Յովհաննու բակից դուրս եկաւ մի մանկահասակ զինուոր, կաճեայով ծածկուած և մորթէ գլխարկը աշքերին բաշած: Առանց անցորդների պատահելու՝ նա ուղղուեց դէպի փողոտան և արագ բայլերով գահուուխ բէկի տան ճանապարհը բռնեց:

Բէկը գործ էր դրել ամեն զգուշութիւն, որպէս զի ծպտեալ թիկնապահին ոչ ոք չպատահի: Նա հեռացը էր բակից նաև զինուորներին, որոնց սրատես աշքից չէր կարող թագչել «կինը», թէկուզ նա հագուած լինէր զինուորական տարազով: Խսկ ինքը նստած պատուհանի առաջ՝ անհամբերութեամբ սպասում էր «Արան»:

Սակայն այդ սպասելը իւր մէջ ունէր, նաև, մի անհանգստութիւն, որից, մինչև անդամ, բարախում էր բէկի սիրտը... նա սպասում էր ձնրան» այնպէս, ինչպէս իւր կեանքում չէր սպասել ոչ որի: Բաղմախորտիկ ճաշը, որ նա վայելել էր՝ համեմած հայկական շարագով, զրգուել էին նրա հեշտասիրական զգացումները: Նա պատկերացնում էր իւր երևակայութեան մէջ այն վայրկեանը, երբ ներս պիտի մտնէր տենչալի գեղեցկուհին, այն րոպէն՝ երբ ինքը պիտի զրկէր նրան և շահին ներկայացնելուց առաջ՝ յագեցնէր վաղուց հետէ ունեցած իւր տենչանքը...:

Եւ ահա, վերջապէս, տան բակը մտաւ սպասուած հիւրը և թեթև քայլերով մօտեցաւ մուտքին: Շահուուխը դիմաւորեց նրան ժպտերես:

«Մանկահասակ թիկնապահն», որ մինչև բէկի տունը հասնիլը ծանր տագնապներ էր անցուցել, մերթ արիացել, մերթ վհատուել էր, մերթ յուզմոնքից քրտնել, մերթ երկիւոից դողղացել էր. տան բակը մտնելուն պէս քաջացաւ. աներևոյթ մի ոյժ, կարծես, զօրացրեց նրան. «արագ և հաստատուն բագկով». շշնջաց, ասես, մինը նրա ականջում. և նա ներս ընկաւ իրք մի մարմնացեալ սրտմտութիւն:

Բէկը, որ զմայլած էր տիրուհու կերպարանքին, ըստ որում այրական հագուստի մէջ նա աւելի էր գեղեցկացել. նրա դէմքի այլայլութիւնը վերագրեց նրա ամօթխածութեան, և այդ հանգամանքը աւելի ևս զրգուց իւր հեշտասիրութիւնը:

— Ով Ալ-Ջէննաթի փէրի, վերջապէս դու ինձ մօտ ես, բացականչեց նա յափշտակութեամբ և այն ինչ պագչոտ հայեացը այրիի աշքերին ուղղած՝ տարածել էր թեերը նրան զրիելու համար, երիտասարդուհին արագութեամբ բարձրացրեց դաշոյնը, որ մերկացրած, պահած էր կա-

ճեայի տակ ու ամենայն ուժով խրեց բէկի կուրծքը։ Ա-նակնկալ հարուածը իջաւ ուղիղ սրտին։ Կարծես ծերու-նու խօսքն էր, որ ներշնչարար դաշոյնը ուղղեց յարմար տեղի վրայ։ Բէկը, որ յետ քաշուելու միջոց չոնեցաւ, հաղիւ մի հառաջ արձակեց և ճարպոտ դէմրը ծամածուե-լով գլորուեցաւ յատակի վրայ։

Վարդիթերը, որ մինչ այդ արիութիւնը չէր կորցրել, դուրս քաշեց դաշոյնը բէկի պարարտ կրծքից և դնելով այն պատեանի մէջ, մի վերջին, վրիժառու հայեացը ձը-գեց մեռնողի վրայ և արագ քայլերով դուրս վնաց այդտեղից։

Բակում նրան պատահեց սպասաւորներից մինը, որը, սակայն, ուշադիր չեղաւ իրեն։ Ուստի և այրին խոյս տուաւ անարգել։

¶.

Յանդուզն սպանութեան լուրը հասաւ շահին և սար-սափեցրեց նրան։ Ո՞վ կարսդ էր, արդեօք, ձեռք բարձ-րացնել արքայի սենեկապետի վրայ։— այս էր առաջին հարցը որ նա արաւ, երբ աւազանին շրջապատեց իրեն։ Եւ սակայն ստացած պատասխանները չգոհացրին նրան։ Միակ ճշմարտութիւնը, որ բալորը միաբերան հաստատեցին, այն էր՝ որ ասում էին թէ՛ Ճահոռվսի բնակարա-նից շտապաւ հեռացողը եղել է արքայի թիկնապահնե-րից մինը։

Այդ պատճառաւ ինքը Ճահաբասը անձամբ հարցա-քննեց իւր բոլոր թիկնապահներին, մահու սպառնալիք կարդալով նրանց, եթէ կյանդինէին ճշմարտութիւնը ծած-կել։ Բայց և այնպէս նրանցից ոչ ոքին յանցաւոր շգտաւ։

Այն ժամանակ Ճահը պահանջեց Ամիր-գիւնէից, իր-

ըև երկրի գլխաւոր կառավարչից՝ քսան և չորս ժամուայ ընթացքում գտնել յանցաւորին:

Խանի դրութիւնը ծանր էր: Նա համոզուած էր որ այդ սպանութիւնը կատարել են հայերը. բայց թէ նվեր իսկապէս. չէր կարողանում գուշակել Վերադառնալով տուն, նա պատրաստում էր հրաւիրել հայոց գլխաւորներին, որպէս զի նրանցից ճշմարտութիւնը իմանայ: Երբ նրան յայտնեցին թէ մի հայուհի կամենում է տեսնել իրեն:

—Թոյլ տուէք գայ, հրամայեց խանը: Եւ նրան ներկայացաւ Վարդիթեր տիրուհին, ձեռքին բռնած շորերի մի կապոց, որը և դրաւ խանի առաջ:

—Ո՞վ ես դու, և ի՞նչ է այս. հարցրեց խանը անփոյթ եղանակով:

—Ես Անդրէաս երէցի կինն եմ և Շահուսւս թէկի սպանողը, շնչաց տիրուհին:

—Ինչպէս... դու. անկարելի է, քացականչեց խանը. աշքերը յառելով այրիի վրայ:

Վերջինս նայեց իւր շուրջը և տեսնելով որ սենեակում իրենցից զատ ոչ որ չկայ, բարձր ու հաստատուն ձայնով ասաց.

—Այս, խան, ես սպանեցի այն հրէշին, և ահա ապացոյցը:

Այս ասելով Վարդիթերը՝ բացաւ կապոցը և ցոյց տալով խանին թէկի կողմից իրեն զրկուած հազուատը, կամարը և արիւնոտ դաշոյնը, սկսաւ մի առ մի պատմել եղելութիւնը:

Խանը ոչ միայն չ'բարկացաւ այրիի անկեղծ խոստովանութիւնը լսելով, այլև հիացաւ նրա քաջութեան վրայ և գովեց իբրև ամուսնասէր կնոջ:

—Դու մի բարի գործ ես կատարել, ասաց նա, որովհետեւ չարերին պատժելը նոյնպէս բարիք է: Բայց

ինչնու, աղջիկս, դու եկար քեզ մատնելու։ ԶԵ՞ որ ճշմարտովթիւնն իմանալուց յետ ես չեմ կարող ծածկել այն իմ արբայից։

— Ես գիտէի որ իս գործած սպանութեան համար հալածանք պիտի յարուցանէր շահը իմ աղջակիցների գէմ։ այդ պատճառով եկայ ճշմարտութիւնը յայտնելու, որպէս զի պատիժը կրեմ միայն ես։ Եթէ իմ հոգելոյս ամուսինը շգործած յանցանքը իւր վրայ առաւ՝ շատերի փոխարէն մեռնելու համար, ինչպէս կարող եմ ես չետեղ նրան և ժոյլ տալ որ անմեղները պատժուին իմ փոխարէն։

— Դու մի աղնիւ ու արդար կին ես. դու չես սպանել Շահութին, այլ Աստուած քո ձեռքով պատժել է նրան... դու ուրեմն պիտի ապրես. ես կաշխատեմ աղատել քեզ։

— Կեանքը այսուհետեւ արժէք չունի ինձ համար. ասաց տիրուհին։

— Ըսդհակառակին, աղջիկս նա ոյժմ կրաղցրանայ, որովհետեւ ամուսնուդ արեան վրէժը լուծեցիր։ Հեռացիր այստեղից և թագնուիր։ Ես քո մասին կիսուեմ շահի հետ։

— Իմ հաշիւը, խան, ես վերջացրել եմ աշխարհի հետ. մի նեղացնիր քեզ իմ պատճառով։

— 2է, աղջիկս, դու դեռ պարագ ունիս կատարելու, դու պիտի ապրես քո ամուսնու ծնողներին ծառայելու համար։

Խանի վերջին խօսքը կարծես սթափեցրեց մանկամարդ այրիին։ Նա յիշեց զառամեալ սկեսուրին ու սկեսուրյրին և կեանքը, ասես թէ, յարգելի դարձաւ իւր աշբում։ — Ճնարա արդար հոգին կնայէ երկնից և կհրճուի տեսնելով՝ որ ես ապրում եմ իւր խեղճ ծնողներին ծառայելու համար...» մտածեց Վարդիթերը այդ րոպէին և համոզուեցաւ թէ, արդարեւ պարտաւոր է դեռ ապրել։

—Միայն իմ այդ պարտքը կատարելու համար կը կամենամ որ դու ազատես ինձ, խան, ասաց տիրուհին:

—Կաղատեմ. գնա և իմ կողմից ասա խօջայ-Ծնձրեի կնոջը որ քեզ տանէ թղնայ և մի առ ժամանակ պատսպարէ իւր տանը. Կարող է պատահել որ շահը պտրէ քեզ. բայց ես չեմ ցանկանում որ նրա խուզարկուները գտնեն քեզ այստեղ:

Վարդիթերը զգացուած չնորհակալութիւն արաւ խանին և դուրս գնաց: Խոկ վերջինս շտապեց Շահաբասի մօտ:

—Մարդասպանը գտի, տէր իմ, ասաց Ամիրգիւնէն, զլուխ տալով թագաւորին:

—Հայերից մինն է, այնպէս չէ, հարցրեց թագաւորը շտապով:

—Հայուհիներից մինը, տէր իմ, յարեց խանը:

—Հայուհիներից մինը, այդ անկարելի է, բացականչեց շահը:

—Եյս, տէր իմ, այն էլ խիստ մանկամարդ հայուհիներից...

—Մանկամարդ... պատմիր, պատմիր. այդ շատ հետաքրքրական է:

Եւ Ամիրգիւնէն սկսաւ մի առ մի պատմել թագաւորին Վարդիթեր տիրուհուց լսածները:

—Վաղ առաւօտ, ուրեմն, կախեցէք միննոյն կախաղանից այդ յանդուգն կնոջը, ասաց թագաւորը:

—Ոչ տէր իմ, նա պիտի ապրի. ես այդ խոստացայ նրան. ասաց Ամիրգիւնէն:

—Խան, դու հիւանդ չես. զայրացած և զարմացած հարցրեց թագաւորը:

—Կամենում ես ասել թէ գուցէ խելագարուել եմ ծերութեանս օրերում:

— Հապա ինչ պատասխան է այդ, որ դու տալիս ես ինձ։

— Ես, տէր իմ. խոստացայ այն կնոջը ապրեցնել, յուսալով քո մեծանձնութեան վրայ։ Բացի այդ, ես թանգ եմ գնահատում քո հանդստութիւնը, ուստի կամնում եմ որ դու արքայական ներողամտութեամբ վախճան գնես այն անարդակներին, որ մեր կողմից հասնում է այս տիրասէր ժողովրդին։ Որքան էլ մենք նրանց չնշին արարածներ համարենք, այսուամենայնիւ, պիտի խոստովանենք, որ նրանք էլ մեղ նման զգայուն մարդիկ են. նրանք էլ մսից ու արիւնից են կազմուած և մեղ պէս էլ ունին պատւոյ զգացում։ Մրցիւները որքան էլ փոքր են ու չնշին, այսուամենայնիւ, կարող են տապալել կազամախը, եթէ շարունակ նրա արմատը փորեն...։ Դու առ ոչինչ գրեցիր սկզբում իմ զգուշացումները. բայց ահա դէպրը ինքն է վկայում թէ ես իրաւոնք ունէի զգուշացնելու. Եթէ մի տկար հայուհի կարողանում է յաղթանդամ Շահութիւնն ոչնչացնել, ապա շատ զօրաւոր հայեր կարող են ուրիշ շատ բաներ լանել։ Զպէտքէ ուրեմն մենք նրանց համբերութիւնը սպառենք։ Ժողովրդի յուսահատութիւնից առաջանում է հեղեղ, որ տապալում է ամենազօրաւոր ամբարտակներն անդամ...։

Սյս եղանակով երկար խօսելով՝ խանը վերջապէս, համոզեց շահին՝ ոչ միայն ներել մանկամարդ տիրուհուն այլ և հրաման տալ ամփոփել նահատակի մարմինը, որ պէս զի ժողովրդի յուզումը դադարի:

— Ինչ վերաբերում է Շահութիւնի սպանութեան, թող ամենքն իմանան թէ այդ բանն արել է քո թիկնապահներից մինը, որը և, իբր թէ, փախել է արդէն. ասաց խանը շահին, — որովհետև ամօթ է հոչակել թէ այդ հաստամարմին պարսիկը սպանուել է մի մանկամարդ հայուհուց։

Թագաւորը բանաւոր գտաւ նախարարի խորհուրդը
և հրամայեց դադարեցնել սկսուած քննութիւնը:

Երբ նահատակի մարմինն ամփոփելու հրամանը լայ-
տարարուեց, հայերը լցուեցան ուրախութեամբ։ Ագու-
լիսն ու Դաշտը նորէն իրար անցան և ժողովուրդը գուն-
դագունդ դիմաւորեց սուրբի մարմնին, որը Միսականի
բաղմախումբ հոգևորականութիւնը, զարդարուն դագաղի
մէջ բերում էր դէպի քաղաք։

Նահատակի մարմինը, որ ձիւնով ծածկուած լինե-
լուն պատճառով մնացել էր անապական, օծեցին անու-
շահու իւղերով և դրին Խցածորի սուրբ Յովհաննէս ե-
կեղեցում։ Մի քանի օր շարունակ թէ՛ Ագուլիսից ու
Դաշտից և թէ՛ Միսականի հեռաւոր կողմերից գունդա-
գունդ գալիս էր բաղմամբոխ ժողովուրդ՝ նահատակ երէ-
ցի նշխարներն համբուրելու, եւ այդ բոլոր ժամանակ
մատուցում էր հանդիսաւոր պատարագ և զինւում էին
զոհեր։

Որոշուած օրը փառահեղ հանդիսաւորութեամբ ամ-
փոփեցին անզուգական երէցի նշխարները ս. Յով-
հաննէս եկեղեցու ս. Մտեփաննոս կոչուած խորանի
տակ, ձախակիոդմեան աւանդատանը։ Եւ սուրբ Հիրիմը ծած-

¹⁾ Արժան էր և իրաւ, որ հին Ագուլեցւոց գէթ այժ-
ման սերունդը հոգար վայելուչ մի յուշարձան կանգնեցնել
այդ իսկական հայրենասէր նահատակի վրայ, որի շիրիմ,
այսօր իսկ, ծածկում է նոյն անշուբ ատպանը՝ չունենալով
իւր վրայ ոչ երէցի անունը ոչ կատարման թուականը։

Թէպէտ և հայ ժողովուրդը անման հովուի նահա-
տակութեան օրից մինչև այսօր արժանաւոր յարդանք է մա-
տուցել նրա դամբանին և պիտի մատուցանէ երկար, այ-
սուամնայնիւ, պատշաճ իսկ է ծածկել այդ սուրբ գերեզ-

կեցին մի պարզ տապանաքարով, որի վրայ չփորազրուեցան ոչ ներբող, ոչ յիշելիք և ոչ խակ սուրբի անոնք, այլ միայն զոյտ խաչաղարդ, իբրև նշան անզուղական անձնուիրութեան...: ¹⁾

ՄՈՒՐԱՑԱՆ



Մանը վայելչաղարդ մարմարիոնով և վրան բանդակել այս
օրինակ մի տապանագիր.

«Հայրենասէր նահատակ

Անդրէաս երէց.

Կատարեալ յԱգուլիս

Յառաջնոյն Շահաբասայ

Դ 18-Ն նոյեմբերի

1617 ամիս.

ՀԵՂ.